



ՏԻՆ ԼԵՒ



Էմիլիա Ա. Էփրայմ Էփրայմ Բուսուգյա
հայտնակառն աստված ԿՍ ԱՊՄՄ ժամանակակից
պաշտոնի



ՏԻՆ ԼԵՒ



ՏԻՆ ԼԵՒ



ՏԻՆ ԼԵՒ



ՏԻՆ ԼԵՒ



ՏԻՆ ԼԵՒ




ՏԻՆ ԼԵՒ



ՏԻՆ ԼԵՒ



Կամուրանի Եփրայիմ Էփրայիմ Բուսուգյա
«Էփրայիմ Էփրայիմ Բուսուգյա» ստեղծագործություն



ՀԱՅԱՍՏԱՆ

Հաբազդերակալան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՍԻՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԿՐԹԱԳՐԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԻ




ՆԿԻՐՎՈՒՄ Է
ԿՈՄԻՏԵՍԻ
ԵՆԵՂՅԱՆ

140 - ԱՄՅԱԿՐԸ

ԿՈՄԻՏԵՍԻ ԵՄ ԳՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ
ՏՈՒՆՏԵՍԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԱՌԱՐԱԿՈՒՄԻ

Handwritten signature



Հոգևորականության արժանատի
Ս. Մ. Կարամանյան Գրախոս
Յուլի 12-47



Յուլի 12-47



Յուլի 12-47



Յուլի 12-47



Է. Օրբանյան և Գրախոս
Յուլի 12-47



Յուլի 12-47



Կառնախոս ՍՏԸ Երվան
սրբանշան ՄԿ
ճարտարապետ արտիստ
սրբանշան Մ. Վ. Կարամանյան
Յուլի 12-47



Վարդան Բազիկի անվան շքանշանի պարգևատրում
Է. Օրբանյան, Մ. Օրբանյան, Գրախոս Կարամանյան Կարամանյան,
Կ. Արարատյան, Դ. Քարամանյան
Յուլի 12-47

Հիմնադիր՝
լրատվական գործունեություն իրականացնող
«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Վկայական N 03 Ա 059505,
գրանցման փարեթիվը 07.04.2003

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

N 4(35)2009

Հիմնադրվել է 1998 թվականին

**Գիտաբանական, քննադատական - հրապարակախոսական,
երաժշտական ամսագիր**

Ամսագիրը ընդգրկված է
ՀՀ ԲՈՂ-ի «Արևմտախոսությունների արդյունքների փայլագրման
համար ընդունելի ամսագրերի ցուցակում»

Պատվավոր հիմնադիր փոփոխելի՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
պրոֆեսոր
ԱՐՄԵՆ ԲԱԳՐԱՏԻ ՍՄԲԵՏՅԱՆ

Տնօրեն՝

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
Ռեկտոր, պրոֆեսոր՝ **ՍԵՐՊԵՅ ԳԵՈՐԳԻՍ ՍԱՐԱԶՅԱՆ**

Հիմնադիր, գլխավոր խմբագիր և հրատարակիչ, երաժշտագետ՝
ԳՈՂԱՐ ԿԱՌԼԵՆԻ ՇԱԳՈՅԱՆ

Համարի թողարկման պատասխանատու, պատասխանատու քարտուղար,
դոցենտ՝
ՎԱԼԵՆՏԻՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԹՈՎԱՄՅԱՆ

Աջակից խորհուրդ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
պրոռեկտորներ՝
**ԱՐԿԱԳԻ ՍԻՐԱՅԵԼԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ,
ՆԱՐԵԿ ՌՈՐԵՐՏԻ ԱՆՏՈՆՅԱՆ**

ԽՄԵԼՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Արմեն Սմբաբյան (պրոֆեսոր), Սերգեյ Սարաջյան (պրոֆեսոր), Ռոբերտ
Ամիրխանյան (պրոֆեսոր), Նելլի Ավերիայան (արվեստագիտության
թեկնածու, պրոֆեսոր), Աննա Արևշաբադյան (արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր), Գևորգ Գյուլյան (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր),
Ժաննա Չուրաբյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր), Դավիթ
Ղազարյան (պրոֆեսոր), Էդվարդ Միրզոյան (պրոֆեսոր), Գոհար Շաղոյան
(նախագահ), Լիլիթ Երևանյան (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր),
Լևոն Չառչյան (պրոֆեսոր), Կարինե Չաղազյանյան (արվեստագիտության
դոկտոր, պրոֆեսոր), Սարգսյան Ռուիսյան (արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր), Սվետլանա Սարգսյան (արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր), Արաքսի Սարյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր),
Հենրիկ Սմբաբյան (պրոֆեսոր), Իրինա Տիգրանյան (արվեստագիտության
թեկնածու, պրոֆեսոր), Ալինա Փահլևանյան (արվեստագիտության թեկնածու,
պրոֆեսոր) Սրեկիան Սուքիասյան (դոցենտ)

Խմբագիրներ՝ Հովհաննես Մուրադյան, Սոֆա Ազնատրյան (ռուս.),
Արմինե Եսայան (անգլ.)

Գեղարվեստական խմբագիր՝ Նունե Սամվելյան
Կազմի չեափորումը՝ Հարություն Երիշանյանի
Համակարգչային շարվածքը՝ Սոսաննա Դուխայանի

Արտադրումը միայն «Երաժշտական Հայաստան» ամսագրի գրավոր արտոնու-
թյամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիջ է հեղինակների կարծիքներին կամ
փնտրակներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Գիտական հոդվածները գրախոսվում են:

Կոմիտասի ծննդյան 100-ամ-
յակին (Գևորգ Գյուլյանի
Կոմիտաս գրքից, Ե., ՀՀ ԳԱԱ
Գիտություն, 2000թ. էջ 78-79)
նվիրված կոնդակում Ամենայն
հայոց Կաթողիկոս Վազգեն
Առաջինը գրել է.

«Կոմիտաս վարդապետ բարե-
նորոգիչն է հայ եկեղեցական եւ ժո-
ղովրդական երաժշտութեան եւ գի-
տարարը, որուն գործը կարելի է ար-
ժեւորել միայն մետրոպեան չափա-
նիշով... Ինչպէս սուրբ Մետրոպ քառ-
սէն դուրս բերաւ եւ բիրեղեց ձայնե-
րը հայ բարբառին, եւ իր ազգին ու
աշխարհին պարգեւեց կոթողը հայե-
րէն լեզուին, այնպէս ալ Կոմիտաս
վարդապետ պեղեց, մաքրեց եւ լոյս
աշխարհ բերաւ կոյս աղբիւրը հայ
երգին: Եւ բազում տարիներ, անդուլ,
անյոզմաբեկ, միշտ նոր աւիւնով ու
ստեղծարար տենդով, այդ աղբիւրէն
հայ երգին լոյսը բաշխեց իր ժողո-
վուրդին:

Հայ ժողովուրդը Կոմիտասեան
երգին մէջ գտաւ, ճանչցաւ իր հոգին,
իր ոգեկան ինքնութիւնը: Կոմիտաս
վարդապետ սկիզբ մըն է, որ վախ-
ճան չունի: Ան պիտի ապրի հայ ժո-
ղովուրդով, հայ ժողովուրդը պիտի
ապրի իրմով, ինչպէս այսօր, այնպէս
ալ յաւիտեան»:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ՇԱԳՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ԼՈՒՍԻՆԵ ԶԱՎԵՆԻ
ՍԱՀԱԿՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ



* Կոմիտաս, Թիֆլիս, 1908թ.
Комитас, Тифлис, 1908.
Komitas, Tbilisi, 1908.

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կոմիտասի երաժշտական և գիտական ժառանգության հիման վրա ազգային երաժշտական գիտության մեջ սրբազան հարուստ ու բովանդակալից մի բնագավառ, որն այսօր հայրենի է կոմիտասագիտություն անվանումով:

Անցնելով շեղվորման և զարգացման իր շրջանները, այն դարձավ հայ երաժշտագիտության ուղեցուցիչն բնագավառներից, լինելով նաև հեռակարային՝ գիտական նոր բացահայտումների համար:

Կոմիտասի Բուրեն Թերլենեզյանի աշխատասիրությանը հրատարակված Կոմիտասի «Հողվածներ յնվ ուսումնասիրություններ» ժողովածուն (1.), որը փարիներ շարունակ հիմք հանդիսացավ գիտական նոր բացահայտումների համար: Իր կարևոր նշանակությամբ հանդերձ, այս հրատարակումն ունեցավ նաև բացթողումներ, հատկապես, կապված ժամանակի պարտադրող գաղափարական ուղղվածության հետ:

Ժողովածուի վերջում գերեզման «Երկու խոսքում» խմբագրական կողեգիայի* կողմից նշված է. «Իրենց խոշոր գիտական նշանակությամբ հանդերձ, հողվածներից մի քանիսը (հատկապես յեկեղեցական յերաժշտության բաժնում) կրել են իրենց ժամանակի կրոնական մտայնության վորոշ ազդեցությունը» (1. էջ 199):

Սարգիս Խաչենց հրատարակությամբ իրականացված երկհատորյակը «չկրելով ժամանակի մտայնության ազդեցությունը», ներկայացնում է ազգային մասնագիտական երաժշտարվեստի հիմնադիր՝ Կոմիտաս Վարդապետի ուսումնասիրությունների, հողվածների, դասախոսությունների նոր նյութերով լրացված փարբերակը: Երկհատորյակի

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի գ ի տ ա ս կ ա ն Ժ առ ա ն գ ու թ յ ու ն ը ն ու լ ու յ ա ի ն եր ք ո

Կոմիտասագիտության նշանակալից շեղբերություններից է Ռ.Աթայանի, ապա Գ.Գյոդակյանի ջանքերով ասպարեզ եկած Կոմիտասի երաժշտական ժառանգության ակադեմիական հրատարակությունը (ավարտված է 2006թ-ին):

Այդ հրատարակությամբ սպասվում էր ունենալ նաև Կոմիտասի գիտական հողվածները և ուսումնասիրությունները: 2005 և 2007 թվականներին Սարգիս Խաչենց հրատարակության լույս ընծայած երաժշտական մատենաշարի «Կոմիտաս Վարդապետ, ուսումնասիրություններ և յօդուածներ» երկհատորյակը հնարավորություն է ընձեռում փեսնել կոմիտասյան գիտական ժառանգության ընդգրկումների ավելի լայն փեսադաշտը:

Մինչ այդ, երաժշտագիտության զարգացման համար հիմնավոր ուղեցույց էր 1941թ-ին երաժշ-

խմբագիրներ, բանասիրական գիտությունների թեկնածու Գուրգեն Գասպարյանի և երաժշտագետ Մարինե Մուշեղյանի ջանքերով հանրագումարի են բերված շեռնարկներում, թերթերում, ամսագրերում լույս փեսած Կոմիտաս Վարդապետի երաժշտարվեստական հետազոտությունները, ելույթ-դասախոսությունները ուսումնառության փարիների աշխատությունները:

Ընթերցողների լայն շրջաններին հնարավորություն է ընձեռված ծանոթանալ Երևանի ՉաԳԱԹում (Չարենցի անվ. Գրականության և Արվեստի քանգարան) հավաքված կոմիտասյան երաժշտագիտական ժառանգության հայրենի և նորահայր նմուշներ: Նյութերի գերակշիռ մասը հրատարակված է առանց խմբագրական միջամտությունների և կրճատումների, ընդգրկված են կոմիտասյան թղթե-

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(35)2009

* Խմբագրական կողեգիայի անդամներն էին Գ.Լևոնյանը, Մ.Աղայանը, Ա.Քոչարյանը, Հ.Հարությունյանը:

րում հայրնաբերված կիսապ կամ ակավար քառանունները: Հոդվածներում պահպանված է Կոմիտաս Վարդապետի շարադրանքի ոճն ու ոգին: Հարորները հագեցած են նորային օրինակներով (հայկական և եվրոպական նորագրությամբ), նորահայր լուսանկարներով (2. էջ 432):

Երկհարորյակի խմբագիրները հետամուտ են եղել ներկայացնել Վարդապետի երկարարև (շուրջ 23 տարվա), գիրական գործունեությունը, որը կարող է գիրական նոր բացահայտումների նյութ հանդիսանալ:

Երկհարորյակը սկսվում է Տիգրան Մանուկյանի «Կենսանորոգ ոգի» առաջաբանով, որը սեղմ, բայց խորունկ բովանդակությամբ ներկայացնում է անցյալի հազարամյա ժառանգությունն արժևորած Կոմիտաս Վարդապետի արվեստն ու լուսավորչերպարը: Մարենաշարի առաջին «Ա» գրքում ընդգրկված են 1892-1907 թվականներին Կոմիտասի գրած ուսումնասիրություններն ու հոդվածները: Առաջին անգամ, ամբողջությամբ հրատարակված է 1893թ. Էջմիածնի Գեորգյան ճեմարանի ուսումնական խորհրդին ներկայացված Կոմիտասի «Շնորհալիև, նորա դարը եւ նորա ժամանակ յուզումս կրօնական խնդիրները» աշխատասիրությունը, որի համար Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյանը) արժանացել էր մրցանակագրի (3. էջ 15):

Առաջին անգամ այս հարորում զետեղված են Կոմիտասի կազմած «Տարրական երաժշտութիւն», «Դաշնակութիւն» ուսումնական ձեռնարկները, ինչպես նաև «Պարառիկներ դաշնակութեան դասընթացից» և «Կոմիտասի կարդացած դաշնակութեան դասախօսութիւնը» հոդված-դասախոսությունները, որոնցով նա առաջնորդվել է ճեմարանում դասավանդելու փորձերին:

Հայրնի է, որ Կոմիտասն իր գիրամանկավարժական եռանդուն գործունեությամբ արմատապես փոխել է երաժշտության ուսուցման դասավանդման մեթոդը Գեորգյան ճեմարանում: Իր երաժշտարեսական ձեռնարկները կազմելիս Կոմիտասը ուսումնասիրել է ժամանակի հայրնի երաժշտագիրական աշխատությունները. դա է վկայում ձեռնարկների սկզբունքային, քննական վերլուծական ուղղվածությունը: Ինքնարիպ մրաժողությամբ են կառուցված Կոմիտասի դաշնակության (հարմոնիայի) խնդիրներն ու առաջադրանքները, որոնք ուղղված են երաժշտական փրամաբանության զարգացմանը, և արդի ժամանակներում ևս, կարող են ունենալ մանաշողական գործնական նշանակություն:

Իր ուսումնական ձեռնարկներում Կոմիտասը ելակետային է համարել ազգային երաժշտության առանձնահատկությունները, ընդգծել է նաև օտար երաժշտական մշակույթների հետ ունեցած երաժշտության ադերսներն ու փոխառնությունները: Առաջին գրքում զետեղված «Պարմութիւն երաժշտութեան» ուսումնական ձեռնարկում կարդում ենք. «Հայկական երաժշտութիւն ամբողջ արևելյան երաժշտութեան մէջ թէ իր հիմքին նայելով թէ, փառապատիւնեամբ, չայնեթի դաստորութեամբ ոճով, իրեանց կազմութեամբ, չեւով, երգեցողութեան

եղանակով, արտայայտութեան գեղեցկութեամբ եւ չափի բազմազանութեամբ առաջին տեղն է բռնում: .. Իր պարզութեամբ մարչելի է նաեւ երոպացիներին» (4. էջ 156):

«Ա» հարորի նոր նյութերից են Կոմիտաս Վարդապետի՝ հայ ազգային պարատեսակների ժանրային-թեմատիկ առանձնահատկություններին նվիրված հետազոտության առանձնահատկություններին նվիրված հետազոտության հարվածները. «Պարերի նկարագիր» և «Չանագան եայլիներ», որոնք հաջորդելով «Հայ գեղջուկ պարը» հայրնի հոդվածին (1. էջ 51) առավել ամբողջական են ներկայացնում Կոմիտասի՝ այդ բնագավառում կատարած գիրական-բանահավաքչական աշխատանքը:

Կոմիտասը բացառիկ զգուշություն է ցուցաբերել նաև երգիչ պարատեսու խնդրին, դրա վկայությունն է մարենաշարի «Ա» գրքի հավելվածում, առաջին անգամ տպագրված Ֆրից Արլբերգի «Չայնամարգութիւն» աշխատության կոմիտասյան քարգմանությունը (գերմաներենից հայերեն): Չայնամարգության վարժանքներից շատերը Կոմիտասը կիրառել է իր մանկավարժական և խմբավարական գործունեության ընթացքում (5. էջ 132):

Կոմիտաս-մանկավարժի կերպարը և գործունեության ընդգրկումներն ամբողջանում են մարենաշարի երկրորդ հարորում զետեղված հայրնի և նորահայր հոդվածներով:

Երկրորդ հարորը ներկայացնում է 1908-1915 թվականներին գրած Կոմիտաս Վարդապետի ուսումնասիրություններն ու հոդվածները: Այստեղ, առաջին անգամ, տպագրված «Մանկիկ Վահագնի», «Մանկապարտեզ» աշխատությունների պարառիկներում, Կոմիտասը մշակել է պարի և շարժման միջոցով երեխաների երաժշտական մրաժողությունը զարգացնող մի շարք նորարարական մեթոդներ:

«Մանկապարտեզ» աշխատության մեջ Կոմիտասը գրում է. «Երգելի իբր առարկայ չէ, որ պիրի աանդել, այլ լսելով ուսածն անդրադարչել: Երգերի եւ պարերի եղանակները հիմնելու են պարզ առօրեական օրէնքներուն վերայ: Ավանդել այսպէս՝ 1. Երգի նիւթը ծանօթացնել, 2. Բառերն ուսուցանել, 3. Բառերն արտասանել տալ, 4. Երգի լոկ եղանակը նուագել...» (2. էջ 207):

Ըստ Կոմիտասի, երաժշտական ուսուցումը կազմակերպող կարևորագույն միջոցներն են քայլքը, խաղը, պարը, որոնք խթանում են մեկրառիթմի զգացողության զարգացմանը. «Չափերը պարզ, համանման, նահադասութիւնները հաւասար մրաժումս, եղանակն աշխոյժ, առոյգ եւ միշտ զվարթ», - գրում է երաժշտագետը (2. էջ 205):

«Առաջնորդելով բնության համաշայն» (2. էջ 79) Կոմիտասն իր երաժշտամանկավարժական դաստիարակության հիմքում կարևորում էր խմբակային երգեցողության ուսուցումը, խմբերգային մրաժողության զարգացումը, որի ակունքները գալիս էին ժողովրդական սրեղծագործությունից: Երկհարորյակի նոր հրատարակումները՝ հետազոտական առար նյութ են: Նրանցում զետեղված կոմի-

տասյան մանկավարժական ծրագրերի լիարժեք լուսարանունը հնարավորություն կընձեռի Կոմիտաս Վարդապետին դիրարկել համաշխարհային երաժշտամանկավարժական մտքի զարգացման համակարգում:

Չեռնամուխ լինելով դժվարին աշխատանքի, երկհարյուրյակի խմբագիրները համեմատել և ճշգրտել են Կոմիտասի երաժշտական ժառանգությունը արագրած բոլոր հայրենի հրապարակումները. «Արարար» ամսագիր (Վաղարշապատ), «Ազատամարտ» օրաթերթ (Կ. Պոլիս), «Ամենուն փարեցոյց» փարեցոյց (Կ. Պոլիս), «Հայրենիք» ամսագիր (Բուսրուն) և այլն: Առանձնակի կարևորություն են փոխել Կոմիտասի ժամանակակից, մտավորական Արշակ Չոպանյանի հիմնադրած «Անահիտ» հանդեսի (Փարիզ) համարներում հրատարակված կոմիտասյան նյութերին: Ա. Չոպանյանը փարբեր փարիներ (1906-ից 1935թթ.) բանաստեղծ և հրապարակել է Կոմիտաս Վարդապետի Եվրոպայում կայացած ելույթ-համերգները, դասախոսություններն ու հոդվածները:

Ըստ երկհարյուրյակի կազմողների, Ա. Չոպանյանի հրապարակումները, հեղինակային բնագրերին հարազատ, խմբագրական կրճատումներից զերծ ամենահավասարի փարբերակներն են: Մարենաշարի երկրորդ հարորում «Անահիտ» հանդեսից, առաջին անգամ, վերապրված են «Հայ եկեղեցոյ առողանութեան նշաններուն սխարեմը» ֆրանսերեն բարգմանության բնագիրը, ինչպես նաև «Առողանութեան նշաններ» ֆրանսերեն բնագրից վերածնված արժեքավոր հետազոտությունը, որի էջերում կարդում ենք. «Առողանութին նշանակում է բմբռնում, արտայայտում, այսինքն՝ հնչեցնել երգելով կամ ասել հասկանալով: Սա կոչվում է մտքի արուեստը», որի միջոցով այդ ընթերցանութիւնը դառնում

է հասկանալի...» (2. էջ 168):


Հարորում րեղ գրած Ա. Չոպանյանի արագրած նյութերի մեջ հայրենաբերված են մի շարք հոդվածների նախնական փարբերակները, նույնպես, այսօր մտածելու նյութ են տալիս: Գրանցից են. «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» հիմնարար աշխատության նախնական փարբերակներից մեկը, որտեղ Կոմիտասը իրեն բնորոշ խորաբափանցությամբ գրում է. «... առհասարակ մենք սովոր չենք մեր րգիտութիւնը խոստովանելու, մի առաքինութիւն, որ ազգերի և անհատների յառաջադիմութեան ու քաղաքակրթութեան համար նախադուռն է» (2. էջ 90): Չեպրեղված են նաև Կոմիտասի «Ինքնակենսագրության» փարբերակները՝ նոր հետաքրքրական փաստերով, օրինակ. նորահայր փաստ է 1907 թվականին Կոմիտասի Հռոմում կարդացած «Հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին» դասախոսությունը (2. էջ 52), կամ այն նշանակալի դերը, որն ունեցել է Գևորգյան ճեմարանը՝ Կոմիտաս Վարդապետի հոգևոր դաստիարակության գործում (2. էջ 49):

Այս րեղեկությունները հնարավորություն կրան նոր լույսի րակ դիրարկել Կոմիտասի գիրական կենսագրության կարևորագույն շրջանները:

Անուշտ, երկհարյուրյակի նշանակալի շեքքերումներից է Կոմիտաս Վարդապետի եկեղեցական երաժշտության ուսումնասիրությունների ընդգրկումը՝ հնարավոր ամբողջությամբ, առանց խմբագրական կրճատումների:

2-րդ հարորում, առաջին անգամ է րպագրված «Հայ եկեղեցական երաժշտություն. Հայոց ութշայն համակարգը» հոդվածը գերմաներեն բնագրով և հայերեն բարգմանությամբ: Սա Կոմիտաս Վարդապետի ծավալուն ուսումնասիրության մի հարվածն է, որի ծանոթագրության մեջ նշվում է. «Կոմիտաս

երաժշտական ՂԱՅԱՍՏԱՆ 4(35)2009



* Գևորգյան ճեմարան, Էջմիածին
Семинария Геворкян, Эчмиадзин
Gevorgian Seminarium, Echmiadzin

Վարդապետի արխիվում պահպանուող այս հարուածը եւ նրան կից ծրագիրը վկայում են, որ երգահանը մտադրուել էր ծաւալուն ուսումնասիրութիւն գրել հայ եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան մասին, որը բաղկացած էր լինելու չորս մեծ բաժիններից. Ա. Հայ եկեղեցական երաժշտութիւն, Բ. Հայ ժողովրդական երաժշտութիւն, Գ. Իւրոնացիան հայերի մօտ, Դ. Երաժշտութեան կախումաւորութիւնը բնութիւնից ընդհանրապէս» (2. էջ 465):

Աշխարհայայտի պահպանուած հարուածում գիտական արժեքավոր դիտարկումներ են՝ հայոց եկեղեցական երաժշտութեան շայնեղանակային, ճակատագրական առանձնահատկութիւնների վերլուծութիւնները:

Երկրորդ հատորի մի մեծ բաժին (2. էջ 321-ից 461) նվիրուած է Կոմիտաս Վարդապետի խազաբանութեան ուսումնասիրութիւններին՝ «Խազերի մեկնաբանութիւնները»: Տպագրուած նյութերից ակնբախ է դառնում Կոմիտասի խազաբանութեան բնագաւառում կատարուած աշխարհագրութեան մանրագիտական ուղղուածութիւնը:

Յանկալի կլիներ, որ երկրորդ հատորի խազաբանական աշխարհագրութեան ծանոթագրութիւնները լինէին առավել ընդարձակ, հագեցած բնական

մեկնաբանութիւններով, բացարձակութիւններով ու գիտական եզրահանգումներով:

Բայց, ինչպէս վերը նշուեց, երաժշտական մատենաշարի հրատարակիչներն ու խմբագիրները հետամուտ են եղել մեկտեղել եւ հնարավոր ամբողջականութեամբ* ներկայացնել Կոմիտաս Վարդապետի գիտական ժառանգութիւնը: Երկհատորյակում ամփոփուած Կոմիտաս Վարդապետի մտքերը, ստույթներն ու գիտական բնորոշումները չեն կորցրել իրենց արդիականութիւնը գիտական նոր բացահայտումների «նախադուռ»** դառնալու կարողութիւնը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Կոմիտաս, Հոգիւածներ յեվ ուսումնասիրութիւններ, հավաքեց Ռ.Թերլեմեզյան, Ե., Պետհրատ, 1941:
2. Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք «Բ», Ե., Սարգիս Խաչենց-Փրինթինգ, 2007:
3. Սամվելյան Խ., Կոմիտասի կյանքի եւ գործունեության համառոտ տարեգրութիւնը, «Սովետական արվեստ», N 10, 1969:
4. Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք «Ա», Ե., «Սագիս Խաչենց», 2005:
5. Բաբայան Մ., Երգչի տասը պատվիրանքները, ժամանակակիցները Կոմիտասի մասին, Ե., Պետհրատ, 1960:



* Կոմիտասը Գևորգյան ճեմարանի սաների իր ստեղծած երգչախմբի հետ, Վրաստան, 1905թ.
Комитас с хором воспитанников Эчмиадзинской духовной семинарии (Геворкян), Грузия, 1905.
Komitas with his male chorus from Gevorgian Seminarium in Georgia, 1905.

* Ռ.Թերլեմեզյանի ժողովածուի շուրջ 18 հոդուած եւ ուսումնասիրութիւններ առայլ երկհատորյակի գիտական նյութը հասցուած է շուրջ 40 հոդուածի եւ ուսումնասիրութեան:
** Կոմիտասի բնորոշումը:

ԼՈՒՍԻՆԵ ԶԱՎԵՆԻ
ՍԱՀԱԿՅԱՆ

Արվեստագիտության քեկնածու,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ

2009 թվականին Կոմիտաս
Վարդապետի ծննդյան
140-ամյակի առթիվ
«Սարգիս Խաչենց» հրատարակչությունը լույս ըն-
ծայեց երաժշտական մատենաշարի հերթական՝
«Կոմիտաս Վարդապետ, նամակների» և «Կոմիտաս-
ը ժամանակակիցների հուշերում և վկայություններ-
ում» հատրոնները, համալրելով Մեծ երաժշտի մա-
սին կուրսական հսկայածավալ գրականությունը:

«Սովետական արվեստ» ամսագրում, 1969-ից-
1975թթ-ը:

Նոր հրատարակչության մեջ Կոմիտասի նա-
մակները խմբագրված են ըստ գրության տարեթվե-
րի, բնագրերը դասավորված են ժամանակագրա-
կան կարգով:

Նամակահիում պահպանված է հեղինակային
ուղղագրությունն ու կեղանագրությունը, նամակնե-
րում մեջբերված հայկական չայնանիշերով օրի-
նակները ծանոթագրություններում ներկայացված
են եվրոպական նորագրությամբ:

«Կոմիտաս Վարդապետ, նամակների» հատր-
րի խմբագիր, բանասեր Գուրգեն Գասպարյանը նե-
րածական խոսքում գրում է. «Կոմիտաս Վարդապե-
տից մեզ հասած նամակները ժամանակագրական
առումով ընդգրկում են 1894-1914թուականները եւ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԾՆՆՈՂՅԱՆ 140-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

2005 և 2007թվականներին նույն հրատարա-
կչությունը, հնարավոր ամբողջությամբ ներկայաց-
րել էր «Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրու-
թյուններ և յօդածներ»-ը՝ երկու հատրոնով (1.):

Ժամանակի ընթացքում հարկ եղավ դաստասել,
խմբավորել նաև Կոմիտասի նամակահիում և ժամա-
նակակիցների հուշագրությունները: Հավելենք, որ
մատենաշարի խմբագիրները շարունակում են Կո-
միտասի մասին հուշագրական գրականության (թե՛
հեղինակային հուշերի, թե՛ մամուլում եղած վկայու-
թյունների) ամբողջական դասակարգումը, ուսում-
նասիրությունն ու ծանոթագրման աշխատանքնե-
րը: 2000թ-ին Գրականության և արվեստի բանգա-
րանը հրատարակել էր Կոմիտասի նամակները
առանձին գրքով, իսկ 2007թ-ին լույս էր տեսել նա-
մակահիում լրացված տարբերակը:

Այս երկու գրքերում էլ գերեզման էր Կոմիտաս
Վարդապետի նամակահիում փոքր հատրոնը: «Սար-
գիս Խաչենց» հրատարակչությունը, ինչպես նա-
խորդ՝ երաժշտագիտական ժառանգությունը, այն-
պես էլ նամակահիում հրատարակելիս առաջնորդվել
է միևնույն սկզբունքով. մեկտեղել, համալրել և հնա-
րավոր ամբողջությամբ ներկայացնել Կոմիտաս
Վարդապետի նամակահիում:

Խմբագիրների կողմից կատարված է մանրագ-
նին աշխատանք: Չարենցի անվան Արվեստի և
գրականության բանգարանում պահվող կոմիտաս-
յան արխիվային նյութերի հետ համեմատված են
բոլոր նախկին հրատարակումները (2.), Վարդապե-
տի բարեկամների* արխիվային նյութերի՝ Կոմի-
տասին առնչվող հարվածները, սխյուրթահայ և
խորհրդահայ մամուլի հրատարակումները: Հատր-
րի խմբագիրների համար ուղեցուցային է եղել Խա-
չիկ Սամվելյանի «Կոմիտասի կյանքի և գործունեու-
թյան համառոտ տարեգրությունը» հրատարակված

արագիտում են նրա կեանքի եւ գործունեության
գրեթե բոլոր կարեւոր դրուագներն ու միջադեպերը:
Գրանց մի մասը պաշտօնական գրութիւններ են՝
խնդրագրեր, դիմումներ, հաշուէրոտութիւններ՝ ուղ-
ղուած տարբեր եկեղեցական գործիչների, իսկ մի
զգալի մասը իր բարեկամներին եւ համակիրներին
ուղղուած նամակներ, շնորհատրական բացիկներ
եւ հեռագրեր» (3. էջ 12):

Բացիկների, հեռագրերի, դիմումների, Կոմի-
տասի սրացած նամակների զգալի մասը տպագր-
ված է առաջին անգամ: Արժեքավոր են նաև գերմա-
ներեն, ֆրանսերեն նամակներն ու պաշտոնական
գրությունները՝ իրենց բարգամնություններով: Նա-
մակահիում հարկ ենք համարում առանձնացնել
մանրակրկիտ կազմած ծանոթագրությունների բա-
ժինը, որտեղ յուրաքանչյուր նամակ, խնդրագիր,
դիմում, անգամ լուսանկար, ըստ կարելիության բա-
ցարկվում և պարզաբանվում է:

Հատրոնում խմբագիրներն ի մի են բերել Կոմի-
տաս Վարդապետի գրած 184 և սրացած 37 նա-
մակները:

Մեծ արվեստագետների նամակներն ու հուշ-
ագրությունները երաժշտագիտական ուսումնասի-
րությունների առար նյութ են: Մոցարտի, Բեթհովե-
նի, Շոպենի, Չայկովսկու, Մալերի, Վեբերնի նա-
մակներն ու հուշերը բացահայտում են այդ արվես-
տագետների ներաշխարհը, սրեղծագործական
նկրությունները, սպրած ժամանակաշրջանը՝ իրենց
հուզող խնդիրներով: Կոմիտաս Վարդապետը, որ-
պես գեղարվեստագետ և երաժշտական գործիչ մշ-
տասես եղել է իր ժամանակակիցների ուղադրու-
թյան կենտրոնում: Նրան շրջապատել են ականա-
վոր մտավորականներ, եկեղեցական գործիչներ,
հայ և օտարազգի անվանի երաժիշտներ:

Նամակներում ցայտուն դրսևորված են Կոմի-

* Չոպանյան Ա., Թումանյան Մ., Բաբայան Մ., Հացագործյան Խ., Կոստանյան Կ., Թումանյան Հ., Հարությունյան Ս., Տայան Վ.:

փաստի գիրական կենսագրության մանրամասները, սրեղծագործական ծրագրերը, Կոմիտաս-Մարդու պայծառ նկարագիրը:

Նամակաևնու միջոցով նորովի է լուսարևակում Վարդապետի կյանքն ու բազմաբեղուն գործունեությունը, սպրած փարիները Էջմիածնում, միաբանությունում փրոդ իրավիճակը, Էջմիածնից հեռանալու դրդապատճառները (3. էջ 168):

Կոմիտաս Վարդապետի սրեղծագործական շնավորման կարևորագույն շրջանը Բեռլինում՝ ուսումնառության շրջանն էր, որը հիմնավոր նշանակություն ունեցավ Կոմիտասի բազմակողմանի զարգացման գործընթացում: Իր բոլոր, հեղինակա սրեղծագործական և ուսումնամանկավարժական ծրագրերը Կոմիտասը մտադրացել և մշակել էր Եվրոպայում:

1897թ-ին Բեռլինից Կոմիտասը գրում էր իր մտերիմ բարեկամ, 1902-1905թվականների Գեորգյան ճեմարանի տեսուչ, հայագետ Կարապետ Կուրանյանին. «Նոր փարի է ինչ ուսման վայրում գրնուելը, իմ փոները ես լայնածառայ երաժշտական աշխարհի բազմազան երկերի մէջ են փոնում, իրաքանչիր ժամն ու րոպեն աչքս առաջ պարզում են մի ապագայ տեսարան լիովի անսպառ գործունեութեան հոգածությամբ» (3. էջ 39):

Կոմիտասը զնահարում էր եվրոպական կրթության դարերով կուրակած հարուստ փորձը, և կարևորում դրա կիրառությունը հայ կրթօջախներում: Բեռլինում, ուսումնառության շրջանում, Վարդապետի մոտ հստակորեն ուրվագծվում էին հայ երաժշտանց կազմակերպելու ծրագիրը: Դրա վկայություններից են 1902թ-ին Վահրամ Մանկունուն գրած նամակը՝ դասագրքերի ու կանոնագրքերի ծրագրով (3. էջ 68), Կ.Կուրանյանին հղած հերթական նամակներից մեկը, որում Կոմիտասը անդրադառնում էր իր կողմից ուսումնասիրվող երաժշտական առարկաներին. «Երաժշտական ձե, Կոմպոզիցիա, Հարմոնիա, Երաժշտարուեստի գեղագիրութիւն, Երաժշտութեան ընդհանուր պարմութիւն, Երաժշտագիրական պարապմունքներ» (3. էջ 311):

Խոնարհումով էր խոսում նաև իրեն դասավանդող հեղինակավոր դասախոսների մասին. «Չափազանց գոհ եմ ես իմ ուսուցչապետիցս*, որ այս մի փարուան ընթացքում ինչ այնքան յառաջ փարաւ երաժշտութեան մեջ առհասարակ, որքան 6 փարում չեն անցնում այսպեղի պետական երաժշտանցումն անգամ» (3. էջ 46):

Պարահական չէր, որ Կոմիտասը Էջմիածին վերադառնալով (1899թ.) չեռնամուխ եղավ եվրոպական նորագործություն, ներդաշնակագիրություն (հարմոնիա) և երաժշտության պարմություն դասավանդել Գեորգյան ճեմարանում:


Կոմիտաս Վարդապետի առաջադեմ գաղափարները դժգոհություն էին առաջ բերում ճեմարանի կղերական շրջաններում: Էջմիածնում Վարդապետի սրեղծագործական վերելքը կասեցնող դր-



* Ճեմարանականներ, 1892-1893թթ.
Семинаристы, 1892-1893.
Seminarium students, 1892-1893



* Սողոմոն Սողոմոնյանը ճեմարանի 2 դասարանում, մարտ, 1890թ.
Согомон Согомонян в 6 классе Семинарии, март, 1890.
Soghomon Soghomonyan in the Seminarium 6th class. 1890.



* Թիֆլիս, փետրվար, 1896թ.
Тифлис, февраль, 1896.
Tbilisi, february, 1896.



* Կոմիտասը և Վ.Տեր-Արաքելյանը, Բաքու, 1908թ.
Комитас и В.Тер-Аракелян, Баку, 1908.
Komitas and V.Ter-Araqelyan, Baku, 1908.

դապատճառներից մեկն էլ հանդիսացավ Խրիմյան Հայրիկի կորուստը (1907թ.):

Ամենայն Հայոց Կաթողիկոս, ազգանվեր գործիչ Խրիմյան Հայրիկը (Մկրտիչ Ա Վանեցի) բազ-

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(36)2009

* Խոսքը Ռիխարդ Շմիդտի մասին է:

մակողմանիորեն նպաստում էր Կոմիտասի «ազատ» սրեղծագործական գործունեությանը: Նրա մահից հետո Հայոց Կաթողիկոսի սրբազան պարտականություններն իր վրա վերցրեց Մարթենու Իզմիրլյանը, միևնույն Կոմիտաս Վարդապետը պաշտպանում էր Հռոմում և Վենետիկում հոգևոր կրթություն ստացած, պոլսեցի գործիչ Մադաթիա արքեպիսկոպոս Օրմանյանի թեկնածությունը (4. էջ 67):

Վարդապետին հիասթափեցրեց միաբանությունում տիրող մթնոլորտը, Իզմիրլյանի վերաբերմունքը. «Պետք է ասեմ, - գրում էր Կոմիտասը, - որ այսօրեղ կարարեալ յուսահատութիւն է տիրում վանքում մեր շրջանի մեջ: Համերգս ջուրն ընկաւ, զի ճեմարանում իսառնաշփոթութիւն սրեղծեցին» (3. էջ 161):

Անհնական ապրումներն ու տարակուսանքները Վարդապետը կիսում էր մտերիմ բարեկամներ՝ Մարգարիտ Բաբայանի, Արշակ Չոպանյանի, Կարապետ Կոստանյանի, Վուկո Տայանի հետ: Փարիզաբնակ մտավորական, հասարակական բեղուն գործիչ Արշակ Չոպանյանն ու Կոմիտասի սան, երգչուհի, Փարիզի լավագույն մանկավարժներից Մարգարիտ Բաբայանը գործուն մասնակցություն են ունեցել Կոմիտաս Վարդապետի բազմաբեղուն գործունեությանը, իսկ հիվանդության շրջանում (1919-1935թթ.) ինամարտար հանձնաժողովի կազմակերպական աշխատանքներին: Նրանց հասցեագրված նամակները պարտրված են մի առանձնակի մտերմությամբ և ջերմությամբ: 1901թ-ից սկսված Կոմիտասի և Չոպանյանի բարեկամությունը տարիների

ընթացքում վերափոխվեց սրեղծագործական լուրջ, ազգանվեր գործունեության:

Փարիզում և Եվրոպայի տարբեր քաղաքներում (ժնև, Լոզան, Յյուրիխ) Կոմիտաս Վարդապետի համերգները բանախոսում և վարում էր Ա.Չոպանյանը՝ պրոպագանդելով Կոմիտասի երաժշտությունն ու հայ արվեստը:

Վարդապետը Չոպանյանին ծանոթացնում էր իր ծրագրերին և արժեքավորում նրա հեղինակավոր կարծիքները:

1908թ-ին Կոմիտասը Էջմիածնից-Փարիզ գրում էր Ա.Չոպանյանին. «Այս տարին վերջացաւ: Ես գոհ եմ ինչանից, այս տարի տունը եմ հիւնգ համերգ եւ դասախօսել եմ վեց անգամ: Պատրաստել եմ եւ սկսել Հայ գեղջուկ քնարի միաշայն հրատարակութեան տրանսկաններով դպրոցների եւ առօրեայ գործունեութեան համար: Պատրաստել եմ դաշնակի համար բառական երգ: Խազերի ուսումնասիրութիւնն առաջ տարել եւ աշակերտներին պատրաստել» (3. էջ 143):

Ա.Չոպանյանի ջանքերով Կոմիտասը ծանոթանում էր ֆրանսիացի ակադեմիկոս երաժիշտների (Մեն-Սանս, Շարլ Պորր), համագործակցում նրանց հետ (Պիեռ Օբրի):

Փարիզում Վարդապետին միշտ սպասում էին հարկապես Բաբայանների ջերմ հարկի տակ: Իսկ Մարգարիտ Բաբայանին հասցեագրված բովանդակալից նամակները նաև «Միտիթարական էին»*: 1907թ-ին Բեռլինից Վարդապետը գրում է. «Միտիթ Մարգարիտ, Չեր նամակն ինչ շար ուրախացրեց, -

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(35)2009



Կոմիտաս, 1910թ.
Комитас, 1910.
Komitas, 1910.



* Ս.Մելիքյան, Կոմիտաս, Ա.Շահմուրադյան, 1909թ.
С.Меликян, Комитас, А.Шахмурадян, 1909.
S.Melikyan, Komitas, A.Shahmuradyan, 1909.

և շարունակում, - Հայ եղանակները ինչպես ևնցա ոգին պահանջում է ներդաշնակելը որքան պարզ է, նոյնքան անելի դժուար է. յեպոյ, դեռ մենք հայերս, պէտք է մեզ համար ոճ սրեղծենք ու ապա թէ համարչակ առաջ գնանք»: Նամակների մեջ, հաճախ են հանդիպում Կոմիտասի անկեղծությունը վկայող փողեր. «Ժամանակ է լինում, որ ես ընկղմված եմ կարարելայպես միայն հայ երաժշտության մէջ եւ սեսս այն ժամանակ ես գրում եմ, սրեղծում եմ այնպիսի բան, ինչպիսին յարմար է մեր երաժշտութեան ոգուն, բայց լինում է եւ ժամանակ, որ առանց իմ կամքի, ընկնում եմ մի այնպիսի երեսակայութեան շաղի վերայ, որ կամ հայկական չէ, կամ նորա կողքին է անցնում» (3. էջ 125):

Նամակների մեջ են դրսևորվում Կոմիտասի նպարակասարացությունն ու սկզբունքայնությունը հասարակող մտքեր. «Բայց եւ այնպէս ես պիտի հասնեմ նպարակիս, նոյնիսկ եթէ ամողջ կեսնքս, իսկ վրայ դնեմ: Գորա համար շար բսակ են իմ սրարակից բարեկամներիս իրաքանչիր, նոյնիսկ չնչին համարած կամ բծախնդիր նկարողութիւնները, թէ ինչո՞ւ այս կամ այն կիրորը դուր չէ եկել մէկին, միսին եւ ես աշխատում եմ հարցը լուծել» (3. էջ 125):

1911թ-ին Պոլսից Վարդապետը գրում էր Մ.Բաբայանին. «Ժողովորը շար սիրով է վերաբերում դեպի իմ գործը, որ ուրախալի է ինչ» (3. էջ 201):

Կոմիտասը գնահարված էր ժողովրդի կողմից, նրա արվեստը ճանաչելի էր դառնում ամենուրեք: Այդ հաղթանակների վկայությունն են Վարդապետի նամակները, որոնք իրենց բովանդակությամբ ու շահեկան րեղեկություններով կհերաքրքրեն ոչ միայն երաժշտագետներին, այլև ընթերցողների լայն շրջանակներին:

Նշել ենք, որ Կոմիտասը որպես վառ անհարականություն մշարպես եղել է իր ժամանակակիցների ուշադրության կենտրոնում: Վարդապետը պարականում էր այն գեղարվեստագետների շարքին, որոնց հետ յուրաքանչյուր անչնական կամ սրեղծագործական շփում դառնում էր րոն, հիշարծան իրադարչություն: Ժամանակակիցների հուշերն ու վկայությունները կարևոր րեղ են գրավում կոմիտասագիրության շնամորման փուլերում:

Կոմիտասի մասին բազմիցս հրապարակվել են հուշեր, հիշողություններ պարունակող ժողովածուներ:

1930թ-ին Ռ.Թերլեմեզյանի կողմից, Վարդապետի ծննդյան 60-ամյակին հրապարակվեց «Կոմիտաս» ժողովածուն՝ Կոմիտասի ժամանակակիցների հուշերով (Մ.Աբեղյան, Գ.Լևոնյան, Հ.Աճառյան, Ս.Մելիքյան):

1960թ-ին Գ.Գասպարյանը հրապարակեց «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» հուշերի և հողվածների ժողովածուն, որրեղ ընդգրկված շար հողվածներ առ այսօր չեն կորցրել իրենց գիրական և գեղարվեստական արծերը:

«Սարգիս Խաչենց» հրապարակչության կազմած «Կոմիտասը, ժամանակակիցների հուշերում և վկայություններում» հարորում ժողոված են ինչ-

պես ծանոթ հողվածներ, այնպես էլ նորահայր հուշագրություններ:

Ժողովածում բացակայում են գիրական բնույթի հողվածները. Թ.Հարթմանի 1919թ-ին Թիֆլիսում կարդացած ելույթ-դասախոսությունը, Շ.Բերբերյանի րեսական լուրջ հողվածը, որրեղ, առաջին անգամ ընկվում է Կոմիտասի ինքնարիպ, կվարր-կվիևրակորդների կիրառությամբ հարունիկ մրածողությունը:

Բացակայում են Ռ.Թերլեմեզյանի վերլուծական-ըննադարական հողվածը, Ս.Մելիքյանի պարունական ակնարկն ու Գ.Գեմիթյանի շար բովանդակալից ներածական խոսքը:

Նշել ենք, որ հարորի իմբագիրները նպարակ ունեն շարունակել Կոմիտասի մասին եղած գրականությունյան լիակարար հրապարակումը, և այս ժողովածում, հիևնականում ընդգրկել են Կոմիտասի բարեկամների, սակների հուշագրությունները:

Նախորդ՝ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին» ժողովածուից նույնությամբ վերարպված են Մանուկ Աբեղյանի, Գարեգին Լևոնյանի, Վսահան Տեր-Առաքելյանի, Սրեպիան Թեմոյրյանի, Շարս Տալյանի, Փանոս Թերլեմեզյանի, Մարգարիտ Բաբայանի, Վարդան Պերոյանի, Աղավկի Մերոպյանի հուշերը:

Հրայս Աճառյանի հողվածը րպված է հավելումներով՝ «Կանքիս հուշերից» գրքից, որրեղ հերաքրքրի մեկնաքանություններ կան Կոմիտասի վախճանի վերաբերյալ (5. էջ 30), ինչպես նաև իագարանական աշխարանքների մասին. «Մեր անհարական խոսակցության միջոցին, - գրում է Հ.Աճառյանը, - Կոմիտաս Վարդապետը հայրենց ինչ հերկյալը:

- Մեր հայկական իագերի (չայնանիշների) թիվը 50-ի է հասնում, այսքան նորա չկա երգեցողության մեջ, որ միայն 7 չայն գիրե: Ինչո՞ւ հայերը այսքան իագ են հնարել: Մեր բոլոր շարականները և երգեցողական գրքերը միօրինակ և միարեսակ չայնագրությամբ են գրված, բայց ոչ մի բացարրություն չկա նրանց արծերի մասին: Ես կարծում եմ, որ այս 50 իագերի մեծագույն մասը ներկայացնում է մի քանի նորանների գումարը, օրինակ՝ այսինչը ներկայացնում է դո, րե, մի, ֆա քառյակը միասին կամ մի ուրիշ իագ նշանակում է ֆա, մի, րե, դո քառյակը:

Կոմիտասը հայրենց նաև, որ 15 րարի ուսումնասիրել է հին հայոց չայնագրությունը և վերջապես գաղրկիքը լուծել, այսինքն՝ թե այդ 50 իագերը որ չայների գումարներն են» (5. էջ 25):

Ժողովածում առաջին անգամ են հրապարակված Սաթենիկ Մելիքյանի, Սրեպիան Բաբելյանի, Սրեպիան Բոյաջյանի, Մերոպ Մարանջյանի, Արմենակ Շահնուրադյանի, Տիգրան Չիթունու հուշագրությունները, ինչպես նաև 1955թ-ին Լիքանանում հրապարակված Մելքոն Քրիշյանի «Անմարկանքեղ» գրքի հարվածները:

Կոմիտասի մրերիմ սակ, սրեղծագործության առաջին ըննադար (6.), երաժշտահասարակական գործիչ Սպիրիդոն Մելիքյանի րիկիևր՝ Սաթենիկ

Մելիքյանը Կոմիտաս Վարդապետի մասին գրում է. «Կոմիտասի անունը Սպիրիդոնի համար միշտ էլ ամենանվիրականն է եղել: Ես դա գգում էի ամեն առիթով: Առանձին ակնածակերպով էր նա խոսում իր բանկագին ուսուցչի մասին:

Կոմիտասին Սպիրիդոնը համարում էր իր ամենալավ խորհրդարան, սրբագին բարեկամը, ավագ ընկերը, որ այնքա՛ն բարյացակամ էր և մտերիմ» (5. էջ 318):

Շար են շահեկան փաստերը, որոնք նորովի են լուսաբանում ուսուցչի և աշակերտի փոխհարաբերությունների մանրամասները: Ուշադրության են արժանի բանահավաք, բանասեր Տիգրան Չիթունու հուշերը Կոմիտաս Վարդապետի մասին, խոնարհումն ու ակնածակերպը, որ փածում էին Վարդապետի հանդեպ: Տ.Չիթունուց Կոմիտաս Վարդապետը գրի է առել Վանի ժողովրդական երգեր: Չիթունին պարկերպոր է ներկայացնում Կոմիտասի հետ ունեցած հանդիպումները, աշխատանքի ժամերը. «Յանկիս վրայէն՝ կը սկսիմ երգերը: Տող առ փող կ'երգեմ, ինքը կը շայնագրէ: Բառեակը կամ երկեակը կամ փունը լրանալուն պէս կ'անցնի դաշնակին վրայ՝ կը փորձե գրած խազերը, և կրկնել ու նորէն երգել կուրայ ինծի այն կրորները, որոնց իր լսողութիւնն առաջին անգամն է որ կը հանդիպի» (5. էջ 265):

Ժամանակակիցներից շարերն են վկայում Կոմիտաս Վարդապետի երաժշտական բացարձակ ընդունակությունների, անզուգական շայնի, խոր էության մասին:

Կոմիտաս Վարդապետի անասելի աշխատասիրության, մանկավարժի մասնագիտական բարձր վարպետության մասին է վկայում Գևորգյան ձեռնարանի նախկին աշակերտ Վարչամ Փարսադանյանը. «Մի որևէ երգ սովորեցնելու համար, նա (Կոմիտասը .- Լ.Ս.) ամեն կերպ աշխատում էր բազմակողմանի ճանապարհով բացատրել նյութի բովանդակությունը. օրինակ եթե պետք է սովորեցնեի «Հորովել» երգը, նա սկսում էր վերլուծել այդ երգը, նկարագրել ռանչյար գյուղացու վիճակը...

Երգի բովանդակությունը բազմակողմանորեն բացատրելուց հետո Կոմիտասը մտրեւում էր դաշ-

նամուրին, նվագում և մեղմ շայնով երգում» (5. էջ 41):

Հուշագրությունների միջոցով Կոմիտաս-արվեստագետի կերպարը դառնում է առավել «շռափելի» ու հարազատ: Ժամանակակիցների վկայությունները Կոմիտաս Վարդապետի ասրած ժամանակաշրջանը գիտական կենսագրությունը նորովի գնահատելու առիթ են տալիս:

Վան կարծիքներ, որոնք ապացուցելու և հիմնավորելու կարիք ունեն, բազմաթիվ տեսակետներ կարող են հետազոտության նյութ դառնալ:

Կոմիտաս Վարդապետի շեռագրերի, նյութերի, թղթերի հայտնաբերումն ու մեկտեղումը փրկաշուն ու երկարատև գործընթաց է, որն ըստ կարելիության (2005 թվականից) իրագործում է «Սարգիս Խաչենց» հրատարակչությունը՝ կոմպոզիտոր Տիգրան Մանուչյանի ընդհանուր խմբագրությամբ:

Կոմիտասի անձն ու գործը մշտապես լինելու է հեռանկարային նոր բացահայտումների համար:

Սպասենք Վարդապետի մասին հրատարակվելիք նոր գրականության:

(տե՛ս կազմին)

Ծ Ա Ն Ո Ւ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

1. Տե՛ս մեր հոդվածը՝ Կոմիտասի գիտական ժառանգությունը նոր լույսի ներքո, //Երաժշտական Հայաստան, էջ 2-5:
2. «Պատմա-բանասիրական հանդես», «Գրական թերթ», «Սովետական Հայաստան», «Անահիտ» հանդես, «Մշակույթ» տարեգիրք, Կոմիտասի նամակներ Զագ-ԱԹ 2000թ., Կոմիտասի նամակներ 2007թ.:
3. /Կոմիտաս Վարդապետ, նամականի, Եր., Սարգիս Խաչենց-Փրինսիմֆո, 2009:
4. /Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երաժշտական մատենաշար, Եր., Սարգիս Խաչենց-Փրինսիմֆո, 2009:
5. Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում Սարգիս Խաչենց-Փրինսիմֆո, Երևան, 2009, էջ 30:
6. Մելիքյան Ս., Կոմիտասի ստեղծագործությունների անալիզ, 1932:

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(35)2009

10



* Սողոմոն Սողոմոնյանի ծննդավայրը՝ Քեոթախիա (Արևմտյան Հայաստան) Кутина (Западная Армения). Место рождения Согомона Согомоняна. Soghomon Soghomonian's birthplace Kiotahia (Western Armenia).

**ՏԻՐԱՆ ԱԶԱՏԻ
ԼՕՔՍԱԳՈՋՅԱՆ**

**Երգիչ լրագրող,
թուրքագետ**

Կոմիտաս վարդապետի ներդրումը հայկական երաժշտության ասպարեզում բոլորիս համար անժխտելի փաստ է: Այնուհանդերձ, նրա վաստակը իրական չափանիշներով իր արժանի փեղը դեռևս չի գրել: Գլխավոր պատճառն այն ցավալի իրողությունն է, որ երաժշտագիտական շրջանակները մինչև այժմ թերացած են արժանին հարուցելու նրա գործունեությանը: Այո, շատ է ասվել ու գրվել նրա, գուցե և այնքան շատ, որքան ոչ մի ուրիշ հայ երաժշտի մասին: Հայրենիքում և Սփյուռքում նրա մասին մեծ-մեծ ճաներ ասողները արդյո՞ք ճանաչում են Կոմի-

տաս մյուս՝ վերը նշված ժողովուրդների երաժշտության հետ և ցույց տվեց նրանց տարբերությունը հայկականի համեմատ:

Նրա այլազգի երաժշտության հետ ունեցած իր հարաբերությունների մեզ հասած «ամենածավալուն» արտահայտությունները երեքն են՝ ա)Քրդական երաժշտություն, որը բաղկացած է իր 1903թ-ին Սանկյու-Պետերբուրգում հրատարակված քրդական ժողովրդական երգերի ժողովածուից և Կոմիտասյան արխիվում* գրելվող մի քանի բեկորներից, բ)Նրա հավաքած թրքական «շարկը»ների և «բյուրբյուր»ների ժողովածուներ և բազմաթիվ տարբեր երգերի գրանցումներ, որոնք նույնպես գրելվում են Կոմիտասի արխիվում, կան նաև իր հորինած թրքական երգերը, միաձայն և բազմաձայն: գ)Այս հոդվածի նպատակը հանդիսացող գերմանական երաժշտության արեղծագործությունները, բոլորն էլ իր հորինումները, մենք կիսում ենք երաժշտագետ Ռ.Աթայանի այն եզրակացությունը, որ այս հորի-

ԿԵՐԼԵՏԻՍԿԵՆԻ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

**Գերմանիայում ուսումնառության տարիներին գրած
ստեղծագործությունները**

րասի իսկական վաստակն ու արժեքը: Ինչպե՞ս է ճանաչում Կոմիտասին հասարակությունը և, ինչու՞ չէ, նաև երաժշտական ասպարեզի արվեստագետների մեծ մասը: Հայկական հոգևոր և ժողովրդական երգերը կորստից փրկող, դրանք մշակող, բազմաձայնող մի քանահավաք, որի մասին գիրքեր նաև, որ մի քանի տարի Գերմանիայում էր սովորել: Մեզ դեռևս պակասում են Կոմիտասի կյանքի ու գործունեության լիակատար տարեգրությունը, նրա արեղծագործական ուղու վերլուծությունը, որի մեջ պետք է ներառվեն ոչ միայն իր հոգևոր ու ժողովրդական մշակումները, այլ նաև իր արխիվի հաշվառումն ու հրատարակումը (չմշակված նյութերի) որպես առաջին անգամ: Ամփոփելը, կատարվածներից անհամեմատելի շատ են անելիքները:

Կոմիտասը փրկիչն էր հայ երաժշտության: Նա հայ երաժշտության առաջին տեսաբանն էր: Կոմիտասը ասպարեզ եկավ մի ժամանակաշրջանում, երբ ոչ միայն այլազգիներն էին անրեղյակ հայկական երաժշտության մասին, այլ անգամ հայերն իրենք չգիրքեին թե «հայր երգ ունի, երաժշտություն ունի»: Բայց նա չսահմանափակվեց միայն հայկականով, այլ զբաղվեց նաև թուրք, վրացի, արաբ, պարսիկ և բուրդ ազգային երաժշտության ուսումնասիրությամբ: Հրատարակեց քրդական ժողովրդական երգերի աշխարհում առաջին ժողովածուն: Եվրոպայում ունեցած քանահոսություններում նա ծանոթացրեց ոչ միայն հայկական, այլ նաև արևել-

նումները ստեղծվել էին Կոմիտասի Գերմանիայում ուսանելիս 1896թ-ից 1899թ-ի միջև ընկած ժամանակաշրջանում, բայց համակարծիք չենք իր մյուս հետևորդները, թե դրանք ամբողջապես պիրի վարժություններ, հանձնարարություններ կամ «վրային աշխատանքներ» լինեին: Նրանց մեջ կան այնպիսի գործեր, որոնք դուրս են գալիս այդ սահմաններից իրենց մակարդակով, չեով, և ինչու՞ ոչ, նաև ծավալով, ու տարանջարվում են մյուսներից: Կոմիտասի գերմաներեն ստեղծագործությունների մասին մի քանի անգամ անդրադարձել է Ռ.Աթայանը, իր «Կոմիտասի ուսումնառությունը Բեռլինում» (1. էջ 48-59) և «Komitas, An den Wassern zu Babel» (2. էջ 35-39) հոդվածներում ու նաև իր «Կոմիտաս - երկերի ժողովածու» հավորներում: Ուզում ենք անդրադառնալ նաև Ռ.Աթայանի «Կոմիտասի ուսումնառությունը Բեռլինում» (1.) հոդվածի մի քանի կետերին: Այսպես նշվում է, թե գերմանական ոճով Կոմիտասի գրած ստեղծագործությունները բաղկացած են. ա)յոթ մեներգից; բ)երեք խմբերգից; գ)սաղմոսից; դ)«Nachtlied» («Գիշերային երգ») մեներգից; ե)«Re-miniscenzen» (հուշեր) լարային նվագախմբի պիեսից; զ)«Waldnacht» (անտառային գիշեր) սիմֆոնիկ նվագախմբի համար գրված մի աշխարհությունից; է)«Trauermarsch» («Սգո քայլերգ») դաշնամուրային ստեղծագործությունից; ը)երկու դաշնամուրի «Երգ»ից և թ)մի անավարտ պիեսից՝ երկու թավջութակի և դաշնամուրի համար: Ըստ վերոհիշ-

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(36)2009

* Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (Չարենցի անվ. ԳԱԹ):

յալ ցանկի Կոմիտասի գերմանական սրեղծագործությունները բաղկացած են 18 կտորից, որը ամենևին չի համապատասխանում իրական քանակի հետ:

Հողվածագիրը նշել է նաև թվականներ, որոնց մեծ մասը Կոմիտասի շեռագրերում չկան և ավելացվել են հողվածագրի կողմից: Ծիշոր է «Nachtlied»-ի թվականը, «Դաշնամուրի երգեր»-իև և մասամբ նաև «Reminiscenzen»-իև: Վերջինիս թվականը վերցված է նույնանուն սրեղծագործության դաշնամուրային տարբերակից, որը սակայն հողվածում չի նշվում: Այսուհանդերձ, դժբախտաբար հողվածում չի նշվում նաև, թե հողվածագիրը ի՞նչ փաստերի կամ հաշվարկների հիման վրա է հանգել այդ եզրակացություններին, որոնք մի գուցե մեզ էլ կարող էին համոզել ընդունելու մի շարք որոշակի տարբերակ, ինչպիսիք նշված են «Waldnacht»-ի և «Trauermarsch»-ի դեպքում: Անտարբեր չանցնելով հանդերձ սույն նյութի հետ առնչվող հեղինակավոր մի հողվածի կողքով, այնուամենայնիվ չենք ուզում ավելի խորանալ մանրամասնությունների մեջ, այլ հպանցիկ մի ակնարկ նետելով ուզում ենք այստեղ մեր պրպարումների արդյունքները ներկայացնել, եզրակացությունների ու համեմատությունների իրավունքը թողնելով երաժշտագետ ու երաժշտասեր ընթերցողին:

Կոմիտասյան արիփվում պահվող շեռագրերից մեզ հաջողվեց ի մի բերել նրա գերմաներեն սրեղծագործությունները: Հավաքվեց Կոմիտասյան վաստակի 38 արտացոլումներ՝ բոլորն էլ անսովոր մեր «Կոմիտասյան» ընկալման չափանիշներին: Կան միևնույն եղանակի տարբեր գրառումներ, կամ նույն երաժշտության տարբեր բեկորներ, որոնք մենք դուրս ենք թողել այս վերոնշյալ թվից, չափից դուրս անկատար լինելու պարճառով: Կան նաև անավարտ և ոչ լրիվ դաշնավորված սրեղծագործություններ, որոնք մենք ընդունել ենք թեև ոչ որպես ավարտուն աշխատություններ, բայց այնուամենայնիվ կայացած մրահագումներ ու մրցրել ենք սույն հաշվի մեջ:

Կոմիտասի գերմաներեն սրեղծագործությունները բաժանվում են հինգ մասի: ա) մեներգեր; բ) խմբերգեր; գ) դաշնամուրային գործեր; դ) լարային քառյակի համար գրված աշխատանքներ և ե) մի սրեղծագործություն նվագախմբի համար:

Կոմիտասը իր մեներգերի ու խմբերգերի համար օգտագործել է 7 գերմանացի բանաստեղծի երկեր: Մեկը՝ Յոհանն Վոլֆգանգ ֆոն Գյոթեն (Johann Wolfgang von Goethe 1749-1832) է: Յ. Գյոթեն ընթունվում է որպես անգերագանցելի մեծություն ամբողջ գերմանական պոեզիայում, որին հավասարվելու պարիվը վիճակվում է միայն երկրորդ մեծության՝ Ֆ. Շիլլերին (Friedrich Schiller), երկուսն էլ պարկանում են գերմանացի բանաստեղծների դասականների շարքին: Կոմիտասը չայնավորել է նաև վիպապաշտական (romantik) ուղղության

պարկանող մանաչված գերմանացի այնպիսի բանաստեղծների գործեր, ինչպիսիք են Ն. Լենաուն (Nikolaus Lenau 1802-1850), Օ. Ռոքեթը (Otto Roquette 1824-1896), Ջ. Շտուրմը (Julius Sturm 1816-1896) և Լ. Ուլանդը (Ludwig Uhland 1787-1862): Կոմիտասի սրեղծագործություններում րեղ են գրել նաև իրապաշտների (realist) գործերը, օրինակ Թ. Շտուրմը՝ (Theodor Storm 1817-1888), որի մի բանաստեղծությունը նա օգտագործել է: Միակ կին բանաստեղծուհին, որից նա օգրվել է, Յ. Ամբրոզիուսն (Johanna Ambrosius 1854-1939) է: Այստեղից կարելի է հետևել, որ Կոմիտասը օգտագործել է տարբեր ուղղությունների պարկանող գերմանացի բանաստեղծների սրեղծագործությունները: Մի բան, որ վերը հիշարակված բոլոր վեց բանաստեղծներին հատուկ է, այն է՝ որ բոլորն էլ ապրել և սրեղծագործել են ամբողջովին կամ մասամբ 19-րդ դարում, բայց բացառությամբ Ամբրոզիուսի, ոչ մեկն արդեն չի եղել Կոմիտասի ժամանակակիցը նրա Գերմանիայում ուսանելու ժամանակաշրջանում:

Մեներգերի թիվը տասն են, որոնցից մեկը՝ «Nachtlied» (1. Կ. Ֆ. նո. 532) («Գիշերերգ») կրկնվում է երեք անգամ: ա) գերմաներեն բառերով և ինչպես բոլոր մյուս մեներգերի նման դաշնամուրի նվագակցությամբ, գրված է «դո փոքրալար»* (do minor, do m) չայնակայքի (tonality) մեջ, ընթացքը (tempo) նշված է «Andante Sostenuto», ամանակն (չափը, metr) է 3/4, իսկ մեներգի բաժնի դեմ արշանագրված է «Mezzosopran-Bariton», բաղկացած է 28 հարածներից (տակտ, mesure); բ) նույնպես դաշնամուրի նվագակցությամբ, բայց այս անգամ ռուսերեն բառերով («Горные вершины», ԳԱԹ; Կ. Ֆ. նո. 510): Գրված է «մի կիսավար փոքրալար» (mi bemol minor) չայնակայքի մեջ, ընթացքը ինչպես առաջին տարբերակի մոտ «Andante Sostenuto» է, ամանակը նույնպես 3/4, բայց մեներգի բաժնի դեմ այստեղ գրված է** «Sop.-Ten» (Sopran-Tenor), բաղկացած նույնպես 28 հարածներից; գ) երգ՝ առանց դաշնամուրի նվագակցության, գերմաներեն բառերով (ԳԱԹ; Կ. Ֆ. նո. 710): Վերջին տարբերակը գրված է ք) տարբերակի նման «մի կիսավար փոքրալար» (mi bemol minor) չայնակայքի մեջ, ընթացքը ինչպես մյուս երկու դեպքում «Andante Sostenuto», ամանակը 3/4, բայց ունի 21 հարած նվագակցության բաժնի բացակայության պարճառով: Ամբողջ 38 սրեղծագործություններից թվականացված են միայն հինգը, որոնցից մեկն էլ «Nachtlied»-ն է, նա կրում է 12.1.1899 թվականը: Այս երգի բառերը պարկանում են Մ. Լերմոնյովին, որը այս փոքրիկ բանաստեղծությունը բարգմանել է Գյոթեից, Կոմիտասը Լերմոնյովի բառերը վերադրել բարգմանել է գերմաներենի (ինչպես նկատել էր արդեն Ռ. Աթայանը) (1. էջ 52), որոնց հիման վրա գրել է երգը և արշանագրել երկու անգամ, մեկը գերմաներեն, իսկ մյուսը ռուսերեն բառերով:

Երկրորդ մեներգի անվանումն է «Glückliche

երաժշտական շԱՅԱՍՏԱՆ 4(35)2009

* Փոքրալար-միմոր տերմին օգտագործում ենք տողերիս հեղինակը, ինչպես նաև երաժշտագետ Հ. Ավագյանը ըստ՝ Կոմիտասի:
 ** Նշագրումն ըստ Կոմիտասի:

Fahrt» («Երջանիկ ճանապարհորդություն» ԳԱԹ: Կ.Ֆ. նո.529): Բանասարկեղծությունը դարձյալ Գյոթեին է, անթվակիր, սկսում է «Մի մեծալար» (Mi Major) շայնակայքով, զարդուղություններ (modulation) կատարելով վերջանում է դարձյալ «մի մեծալար»-ով, ընթացքը նշված է «Andante», ամսակեր 4/4, ունի 19 հարած:

Երրորդի խոսքերը նույնպես պարկանում են Գյոթեին, «Meeresstille» («Ծովային լռություն», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.533): Նույնպես անթվակիր: Չայնակայքը դո փոքրալար (do minor) է: Նշված է ընթացքը՝ «Andante Sostenuto», իսկ վերջնամասում ավելացված է Calando: Ամսակեր 4/4 է և գրված 20 հարածի վրա:

Չորրորդ մեներգը հեղափոխի է նրանով, որ բոլոր այս փոքրիկ սրեղծագործությունների շարքում աչքի է ընկնում լայնածավալությանը, ի միջի այլոց երգի երկարությունը պայմանավորված չէ բանասարկեղծության փնտրի քանակով, որպես սովորաբար կրկնվում է նույն եղանակը, այլ այստեղ ընկրված է մի երկարաշունչ բանասարկեղծություն Լեհուսից, որպես գրավոր երկի հետ գուրնթաց զարգանում է նաև եղանակը, որը հասնում է իր գագաթնակետին սրեղծագործության ավարտին: Մեներգի անունն է «Sturmesmythe» («Փոթորկի առասպելը», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.546) ու քվադրված է 30.7.1897, այսինքն Կոմիտասի Գերմանիա գալուց համարյա մեկ տարի անց: Այս երգը սկսում է մի փոքրալար (mi minor) շայնակայքով, անցնում լա փոքրալարի (la minor) և ավարտվում սկսած շայնակայքով: Ընթացքը «Largetto» է նշված: Ամսակեր փոփոխական է: Մինչև 10-րդ հարածը 4/4 ընթանալուց հետո անցնում է 6/8-ի ու հինգ անգամ ևս 4/4-ի ու 6/8-ի վերածվելով ավարտվում է 4/4-ով: Ունի 120 ամսակեր փոփոխություն:

5-րդ երգն է «Nebel» («Մառախուղ», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.547), որը պարկանում է նույնպես Լեհուսի գրչին, անթվակիր է: Այս երգը գրված է սի կիսալար փոքրալար (si bemol minor) շայնակայքի մեջ: Ընթացքը նշված է՝ «Langsam» (գերմ.՝ «Դանդաղ»), իսկ երկրորդ մասի սկզբին պահանջվում է «etwas bewegter» (գերմ.՝ «Մի փոքր աշխուժանալ»): Ամսակեր 3/4 է: Ունի 32 հարած:

6-րդ սրեղծագործությունը այս շարքից կոչվում է «Frühlingsruhe» («Գարնանային հանգիստ», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.547), բանասարկեղծն է Լուրվիկ Ուլանսի: Սա ևս անթվակիր է: Սկսում է սի կիսալար փոքրալար (si bemol minor) շայնակայքով ու վերջնամասում անցնելով սի փոքրալարի (si minor) ավարտվում է նորից սի կիսալար փոքրալարով: Ընթացքը «Adagio» է նշված: Ամսակեր է 4/4: Հարածների քանակությունը 17 է:

7-րդ երգը գրված է «Komm, o Nacht» («Արի, ով գիշեր», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.549) բանասարկեղծության բաների վրա, որը պարկանում է Շյոբերին, քվակեր չի նշված: Այս երգի ընթացքում նույնպես փոփոխվում է շայնակայքը, այն սկսում է սի կիսալար փոքրալարով (si bemol minor), անցնում է կատարյալ (La Major) ու վերջնամասում վերադառնում սկսած շայնակայքի: Ընթացքը՝ «Andante sostenuto»: Ամսակեր է 4/4: Ունի 53 հարած: Մեներգի երգաբաժնում արձանագրված է «Contr-Alt»:

8-րդ Շյոբերի բանասարկեղծությունն է և կոչվում է «April» («Ապրիլ», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 549): Սա ևս անթվակիր է: Չայնակայքն է դո փոքրալար (do minor): Ընթացքը՝ «Langsam» (գերմ.՝ «Դանդաղ»): Ամսակեր 4/4 է: Հարածների թիվը 19: Մեներգի բաժնի մոտ գրված է «Bariton»:

9-րդ երգը պարկանում է այն սակավաթիվ երգերին, որոնց քվակերը նշված է: Սա կրում է 12/24.3.1897 քվակերը, վերնագիրն է «Du fragst?» («Հարցնում ես», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 537), բաները պարկանում են բանասարկեղծուհի Ամբրոզիուսին: Երգի շայնակայքը սի փոքրալար (si minor) է: Ընթացքի նշումը՝ «Commodo»: Ամսակեր է 3/4: Երգը զարգանում է 40 հարածի մեջ: Մեներգի երգաբաժնում նշված է «Alt»:

Վերջին մեներգը, քվով փաստերորդը «Lob des Frühlings» («Գարնան գովք», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 500) երգն է: Սա նույնպես անթվակիր է, բանասարկեղծն է Լ.Ուլանսի: Այս երգի մոտ ոչ նշված էր բանասարկեղծի անունը, ոչ էլ վերնագիր ունեւ: Թե՛ բանասարկեղծի և թե՛ երգի անունը ի հայտ են եկել մեր ուսումնասիրությունների արդյունքում: Նշված չէ նաև ընթացքը: Չայնակայքը մի կիսալար մեծալար (Mi bemol Major) է, իսկ ամսակեր 9/8: Ունի 17 հարած: Այսպիսով ավարտվում է Կոմիտասի գերմանական ոճով մեներգերի շարքը:

Խմբերգերը չորսն են: Բոլորն էլ գրված են քառաչայն երկսեռ երգչախմբի համար: Միայն մեկի՝ «Առ գետն բարեկամս»* սաղմոսի դեպքում ավելացած են նաև մեներգային բաժիններ: Առաջին խմբերգը կոչվում է «Neuer Frühling» («Նոր գարուն», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 502), բանասարկեղծությունը գրել է Ռոբերտին: Սա մի փոքր սրեղծագործություն է, ընդամենը 24 հարածների մեջ ամփոփված: Չայնակայքը Ռե մեծալար (Re Major) է: Գրված է քառաչայն երկսեռ երգչախմբի համար: Ընթացքը փրված է՝ «Allegro non troppo»: Ամսակեր 4/4 է:

2-րդի խոսքերը գրել է Գյոթեին, վերնագրված է «Menschengefühl» («Մարդկային զգացմունք», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 545): Այս խմբերգը նույնպես մի փոքրիկ սրեղծագործություն է, գրված ընդամենը 20 հարածների մեջ: Չայնակայքը փոփոխվում է հիմնականում Ռե կիսալար մեծալարի (Re bemol Major) ու Մի մեծալարի (Mi Major) միջև: Ընթացքը «Adagio» է նշված, իսկ ամսակեր 4/4: Սա նույնպես քառաչայն երկսեռ երգչախմբի համար է գրված:


3-րդը «Lenz» («Աշուն», ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 547) է, հեղինակն է Լեհուսին: Այստեղ դարձյալ մի փոքր երկ է, ամփոփված 30 հարածների մեջ: Ամբողջ սրեղծագործությունը ընդանում է մի մեծալար (Mi Major) շայնակայքի մեջ: Ընթացքը՝ «Allegro»: Ամսակեր է 3/4: Գրված է քառաչայն երկսեռ երգչախմբի համար:

* Այս մասին տե՛ս նաև ավելի մանրամասն (3. էջ 35-39):

Երաժշտական հասցես 4(36)2009



* Բեռլին, 1896թ.
Берлин, 1896.
Berlin in 1896.



* Սպիրիդոն Մելիքյանը և Կոմիտասը Բեռլինում, 1907թ.
Спиридон Меликян и Комитас, Берлин, 1907.
Spiridon Melikyan and Komitas in Berlin, 1907.

Երաժշտական ՂԱԳԱՍՏԱՆ 4(35)2009

Չորրորդ խմբերգը, որը վերջինն է խմբերգերի շարքից, երաժշտագետ Ռ.Աթայանի կողմից բազմիցս անդրադարձված սաղմոսն է «An den Wassern zu Babel» («Առ գետն քարելացվոց», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.519): Բառերը վերցված են Դավթի սաղմոսներից, թվով 137-րդը*: Այս սրեղծագործությունը գրված է նույնպես քառաչայն երկսեռ երգչախմբի համար, բայց ծավալային ու կառուցվածքային առումով էական տարբերություններ ունի: Մյուս խմբերգերից քառապարիկ երկար է, ունի 114 հարված: Չայնակայքը սկսվում է Մի մեծալարով (Mi Major), որից զարտուղություններ կատարելով ավարտվում նույն չայնակայքով: Բոլոր խմբերգերը անթվակիր են:

Ինչպես արդեն նշեցինք, Կոմիտասը որևէ մի բանաստեղծի կամ բանաստեղծական ուղղությանը նախապատվություն չի տվել: Բանաստեղծությունները միատեսակ չեն եղել նաև իրենց տրամադրությամբ: Այսպես, կան գվարթ, թախծոտ կամ տխուր երգեր, կան երգեր, որոնք պատմում են զարնան, բնության վերածննդի, ուրախության մասին, կան նաև այնպիսի սրեղծագործություններ, որոնք անդրադառնում են տխրության, մահի ու գերեզմանի:

Դաշնամուրային սրեղծագործությունները 17 են, որոնցից վեցը անավարտ վիճակում: Այստեղ պետք է նշենք նաև, որ այս շարքի մեջ մտցրել ենք բոլոր այն սրեղծագործությունները, որոնք գրված են դաշնամուրային գույգ հնգագծի վրա, չանրեսելով այն հավանականությունը, որ մի շարք սրեղծագործությունների դեպքում կարող ենք գործ ունենալ նաև ուրիշ նվագարանների, լարային քառյակի և անգամ խմբերգային երաժշտության համար գրված եղանակների հետ:

Այս շարքի 1-ին սրեղծագործությունը վերնա-

գիր չունի, նշված է միայն ընթացքը, «Allegro sostenuto» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.520): Այս մեկը «Կոմիտաս - երկերի ժողովածու»-ի 6-րդ հատորում Ռ.Աթայանի կողմից ներկայացված է որպես Կոմիտասի ֆոնդի 532 համարի տակ գրվելով և անվերնագիր (ընթացքը «Largo») լարային քառյակի համար գրված սրեղծագործության շարունակությունը: Այդ հավանականությունը չժխտելով հանդերձ ցանկանում ենք շեշտել, որ դա այնքան էլ բնորոշ չէ և ընդհանրապես հարցական է, նաև այն կետը, թե Կոմիտասը իրո՞ք դա գրել է լարային քառյակի համար, թե ոչ: Տպավորությունն այն է, որ նա միայն նպատակ է ունեցել դաշնամուրային կամ խմբերգային (ավելի հավանական) այս գրառումը առաջիկայում քառյակի վերածել: Այդ պատճառով էլ մենք այս մեկը ներկայացնում ենք անհարաբար, չանրեսելով այն հավանականությունը, որ այս երկու գործերը կարող են նաև միմյանց հետ կապված լինել: Էջի ներքևում կա թվագրություն 25.11.1898: Այն ընթանում է ռե միորալար (re minor) չայնակայքի մեջ: Ընթացքը նշված է «Allegro sostenuto», իսկ ամսանակը 12/8: Ընդամենը 8 հարված ունի:

2-րդը վերնագրված է «Reminiscenzen» («Հուշեր») (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.580), թվարկված է 14.6.1898: Այս սրեղծագործությունը Կոմիտասի գրառումներից առավել ավարտուն տեսք ունեցողներից մեկն է: Բոլոր նշումները կանոնավոր արչանագրված են: Ունի 33 հարված: Չայնակայքն է դո կիսվեր փոքրալար (do diese minor): Ընթացքը «Andante», որը երկրորդ մասում վերածվում է «Piu Andante»-ի: Ամսանակը՝ 12/8: Բացի վերը նշված երկու գործերից մնացած դաշնամուրային բոլոր սրեղծագործությունները անթվակիր են:

3-րդ գրառման վերնագիրը «Traum» («Երագ»)՝

* Ըստ Հայաստանյայց առաքելական եկեղեցու սաղմոսարանի 136-րդը:

(ԳԱԹ: Կ.Ֆ. նո.585) է: Այս սրեղծագործությունը նախորդին հակառակ, չի թողնում այն փրավորությունը, որ ավարտուն լինի: Գրված է 64 հարածի փոփոխության վրա: Չայնակայքը փոփոխվում է 6 անգամ: Սկսելով Ֆա մեծալարից (Fa Major) ու զարդարություն կատարելով վերադառնում է դարձյալ սկզբնական Ֆա մեծալար շայնակայքի: Ընթացքը նույնպես փոփոխական է: Առաջին մասը՝ «Largo», երկրորդ մասում դառնում է «Andantino», վերջին մասում «Molto Andante» իսկ վերջին 4 հարածներն ավարտվում են նույն ընթացքով, ինչպես որ սկսել էր «Largo»: Ամսակայք սկսելով 3/4-ով, երկրորդ մասում դառնում է 4/4 և շարունակվում այսպես մինչև վերջին 4 հարածները, որտեղ վերադառնում է 3/4 ամսակալի ու ավարտվում այդպես:

4-րդը կոչվում է «Nocturno» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.571): Այն ունի նաև իր հայերեն վերնագիրը, արձանագրված Կոմիտաս վրդ.ի կողմից, «Այգաևուազ»: Կա էլի մի հեղափոխություն: «Երաժշտության Կոմիտաս Վարդապետի - Musik von Archimandrit Komidas, Op. 1»: Սա հիրավի բավական հեղափոխություն մի նշում է: Այն առումով, որ Կոմիտասն իր այս դաշնամուրային կտորը ընդունել է որպես առաջինը իր բոլոր սրեղծագործություններից, կամ էլ որպես առաջինը իր գերմաններեն հորինումներից: Այն թվականացված չէ, ուստի եզրահանգումները թե որ սրեղծագործություններից առաջ է սրեղծել թե հետո, չենք կարող ճշգրտել: Այն ընթանում է 40 հարածներով, բայց ուշադիր հետևողի համար միանգամից նկատելի է դառնում, որ 26-րդ հարածից հետո պակասում են 12 հարած: Իրապես, բնագիրը քննելուց երևում է պարզապես: Այս հարվածում գոյություն ունի համարյա դարարկ մի էջ, որտեղ գծված են 14 հարածների գծերը, բայց չկան շայնանիշեր, բացի առաջին երկու հարածից: Հավանական է, որ Կոմիտասն այս հարածները ցանկանում էր լրացնել սրեղծագործության առաջին մասի զարդարացված փարբերակով, որի գրանցումը թողել է մշակման կամ մաքրագրման ժամանակ կատարելու համար, բայց այդպես էլ չի կատարվել: «Այգաևուազ»ի շայնակայքը սկսում է մի կիսավար փոքրալարով (mi bemol minor) ու անցնում սոլ կիսավեր փոքրալարի (sol diese minor), ապա վերադառնում սկսած շայնակայքին ու այդպես էլ հասնում մինչև ավարտին: Երաժշտության սկզբում ընթացքը չի նշված: Միայն 27-րդ հարածում կա «Andantino» նշումը:

5-րդ (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573) և 6-րդ (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573) ավարտուն դաշնամուրային սրեղծագործությունների մոտ գրված է «Էսքիզ»: Ընդունելով հանդերձ որ այս երկուսից առաջինը մի քիչ փարբերվում է մյուսներից իր հայկական շնչով, այնուամենայնիվ որոշեցինք մրցնել այս շարքի մեջ, որպես Կոմիտաս վրդ.ի Գերմանիայում ուսանելու ժամանակաշրջանի աշխատանք: Ունի 18 հարած: Ընթացքը չի նշված: Ամսակայք 2/4 է: Չայնակայքը Ֆա կիսավեր մեծալար (Fa diese Major), որը փոխվում է ռե մեծալարի (Re Major), վերադառնում Ֆա կիսավեր մեծալարի և ավարտում դարձյալ Ռե մեծալարով:

2-րդ «Էսքիզ»ը գրված է 35 հարածի վրա: Ամսակայք 4/4 է: Այս արձանագրության մեջ բազմաթիվ թերություններ են երևում, որոնցից մեկն էլ ըստ երևույթին շայնակայքը ճշրով նշաններն են: Հակառակ, որ ոչ մի կիսավեր կամ կիսավար նշան չկա փողերի սկզբում, որից կարելի է որոշել շայնակայքը, և որի բացակայությունն իր հերթին պետք է նշանակել Դո մեծալար (Do Major) կամ լա փոքրալար (la minor) շայնակայք, մենք հսկված ենք ենթադրելու, որ նշանները պարզապես մոռացված են կամ չեն նշված, քանի որ երաժշտության կառուցվածքը մեզ այդպես է հուշում: Ընթացքի մասին ոչ մի նշում չկա:

7-րդը կոչվում է «Menuetto» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.577): Ավարտուն փեսք ունեցող հազվագյուր սրեղծագործություններից է: Գրված է 29 հարածում: Չայնակայքը փոփոխվում է այսպես երեք անգամ: Այն սկսում է դո կիսավար փոքրալարով (do bemol minor), անցնում է ֆա փոքրալարի (fa minor) և ավարտվում Սոլ մեծալարով (Sol Major):

Մնացած չորս ավարտուն դաշնամուրային սրեղծագործությունները վերնագիր չունեն: Այս շարքից առաջինը ընթացքը «Andante» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո. 588) է: Ամսակայք 4/4: Իսկ շայնակայքը անփոփոխ դո փոքրալար (do minor) է: Ունի 22 հարած:

2-րդը «Allegro» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573) ընթացք ունի: Ամսակայք 12/8, հետո 6/8, որը փոխվում է դարձեյալ 12/8-ի: Չայնակայքն է Մի կիսավար մեծալար (Mi bemol Major), որը փոխվում է Սոլ մեծալարի (Sol Major), հետո Մի մեծալարի (Mi Major) ու զարդարություն կատարելով հասնում է Մի կիսավար մեծալարի (Mi bemol Major) որով և շարունակում է մինչև ավարտը:

3-րդի ընթացքը «Animato» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.588) է նշված: Ամսակայք է 11/8: Ունի Ֆա մեծալար (Fa Major) շայնակայք: Գրված է ընդամենը 10 հարածում:

4-րդի ընթացքը «Largo» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.588) է: Սա երկարաշունչ սրեղծագործություններից է, ունի 51 հարած: Չայնակայքը առաջին մասում դո կիսավեր փոքրալար (do diese minor) է, որը երկրորդ մասում դառնում է Ֆա կիսավեր մեծալար (Fa diese Major):

Վեց դաշնամուրային գրառում մեզ հասել է, թեքավար փիճակում, պակասում են էջեր: Երեքը անվանում ունեն: Առաջինի անվանումն է «Schwermuth» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.578) («Թսիիծ»), որի շայնակայքն է դո փոքրալար (do minor), հետո փոխվում է Դո մեծալարի (Do Major), իսկ քանի որ անավարտ է ու վերջանում է 28 հարածից, հայրենի չէ, թե ինչպես է այն ավարտվում: Ամսակայք 3/4 է: Ընթացքի նշումն է «Andante sostenuto»:

2-րդը «Trauermarsch» («Սգո քայլերք») (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.588) է կոչվում: Ամեն ինչով կատարյալ փրավորություն թողնող այս սրեղծագործությանը, ափսոս, որ պակասում են էջեր: Չի թվում, որ Կոմիտասն այն անավարտ է թողել: Հավանական պետք է նկատենք, որ էջի շարունակությունը մեզ չի հասել: Սկսում է Մի մեծալար (Mi Major) շայնակայքով, ապա անցնում ֆա կիսավեր փոքրալարի (fa diese

minor), իսկ այնուհետև լա մինոր (la minor), որից զարրորդի կարարելով հասնում է դո մինոր (do minor): Վերջին հարածի ավարտին երևում է, թե չայնակայքը նորից է փոխվում ու սրանում է 4 կիսվեր, բայց քանի որ այլևս չկան չայնակներ, ի վիճակի չենք ճշտելու, թե հավանական Մի մեծալարի (Mi Major) է վերածվում, թե նրա համապատասխան դո կիսվեր փոքրալարի (do diese minor): Այն ունի 38 հարած, իսկ ամանակն է 12/8:

3-րդը կոչվում է «Երագուն» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573): Գրված է Սոլ մեծալար (Sol Major) չայնակայքով: Ընթացքը նշված է «Allegro»: Ամանակն է 6/8: Ունի 27 հարած:

4-րդը վերնագրված է «Էսրիզ» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573): Այս գրառումն ունի բազմաթիվ թերություններ: Թերություններն այնքան աղաղակող են, որ կասկած է առաջանում այս գրառման Կոմիտասի պարկանելիության մասին: Արձանագրված է 16 հարած: Ամանակը սկզբում 4/4 է, որը սակայն 3 հարած հետո փոխվում է 2/4-ի, իսկ 2 հարած հետո էլի 4/4-ի: Ընթացքը չի նշված:

Մյուս երկուսը ընդհանրապես վերնագիր չունեն: Անվերնագիրներից առաջինի ընթացքն է «Allegretto» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.573): Այս մեկը բավական երկարաշունչ, բայց կիսար թողնված մի աշխարհ է: Հերարքերն այն է, որ այս եղանակը Կոմիտասը հետագայում օգտագործել է, թուրք բանաստեղծ ու «Թուրքականության» գաղափարախոսության պարագլուխներից Մեհմետ Էմինի «Էյ իյնեն փիք» բանաստեղծությունը չայնակորելիս: (Կրես` մեր հեղինակած հողվածները) (5.) Այն սկսում է Մի մեծալար (Mi Major) չայնակայքով, անցնում սոլ կիսվեր փոքրալարի (sol diese minor), որից հետո դառնում է մի փոքրալար (mi minor), այնուհետև դո կիսվեր փոքրալար (do diese minor), այսպես բավական շարունակելուց հետո էլ ընդհարվում է գրառումը: Ընթացքն է «Allegretto»: Ամանակը 5/4:

2-րդ անվերնագիրը և ամենանվերջին դաշնամուրային սրեղծագործությունը «Andante» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.570) ընթացք ունի: Ամանակը 3/4 է: Չայնակայքը դո փոքրալար: Հարածները` 20 են:

Լարային քառյակները թվով վեցն են: Երկուսը անավարտ: Ավարտած հորինումներից առաջինի վերնագիրն է «Reminiscenzen» («Հուշեր», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.528): Սա` նույնանուն դաշնամուրային սրեղծագործության մի փարբերակն է, գրված լարային քառյակի համար: Ինչպես վերևում արդեն նշվեց, այս փարբերակը թվարկում չունի, թվարկված է միայն դաշնամուրային փարբերակը: Այն գրված է 33 հարածում: Այսինքն դաշնամուրային փարբերակի չափ: Ընթացքը «Andantino»: Ամանակը 12/8 է: Չայնակայքը անփոփոխ, դո կիսվեր փոքրալար (do diese minor) է:

2-րդ լարային քառյակի համար կազմված սրեղծագործությունը վերնագրված է «Menuetto» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.548), նույնպես անթվակիր: Ամանակը 3/4 է: Ընթացքը նշված է «Allegro»: Մենուետը սկսում է Ռե մեծալարով (Re Major), բայց ավարտվում է համապատասխան սի փոքրալարով (si

minor):

Մնացած ավարտուն լարային քառյակի սրեղծագործություններից երկուսը վերնագիր չունեն: Այս երկուսից առաջինի ընթացքը վերևում նշված է` «Largo» (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.520): Այն գրված է ֆա փոքրալար չայնակայքով: Ունի 4/4 ամանակ: Հարածները 11-ն են: Սա արձանագրված է դաշնամուրային սրեղծագործությունների շարքում նշված անվերնագիր գրանցումներից «Allegro sostenuto» ընթացքն ունեցող գրառման հետ նույն էջի վրա: Մենք նշել էինք թե «Allegro sostenuto»-ն թվարկված է: Այսպես պետք է հիշարակենք, որ էջի վերևի մասում գրանցված է «Largo»-ն, իսկ ներքևում «Allegro sostenuto»-ն, և քանի որ թվակալը արձանագրված է այս երկրորդի ներքևում, հասարակ չէ` թվակալը պարկանում է միայն այդ մի աշխատությանը, թե նկարի է ունեցել ամբողջ էջի գրվածքը, այսինքն նաև «Largo»-ն: Քանի որ այս պարագան անորոշ է, չուղեցիկը կամայական մի ենթադրությամբ լուծված համարել այս հարցը և նախընտրելով եզրակացության չհանգել, մարմնակնշիջելով երկու հավանականությունները:

Վերջին ավարտուն սրեղծագործությունը ոչ վերնագիր ունի, ոչ էլ նշված է իր ընթացքը (ԳԱԹ: Կ.Ֆ. նո.543): Այս աշխատանքի մասին թանգարանի մարյանում արձանագրված է «սկիզբը չկա»: Մենք պարզեցինք, որ այս նշումը ամենևին էլ չի համապատասխանում իրականությանը: Ճշտելով երաժշտության հերթականությունը, մեզ հաջողվեց դասավորել էջերը, որից հետո ի հայտ եկավ այս սրեղծագործությունն ամբողջովին, իր սկիզբով ու ավարտով հանդերձ: Այս նյութը ևս թվական չունի: Այն գրված է 45 հարածում: Ամանակը 4/4 է, որը չի փոփոխվում մինչև վերջ: Գրան հակառակ չայնակայքը սկսում է Մի մեծալարով (Mi Major) ու փոխվում մի փոքրալարի (mi minor):

Ինչպես վերը նշվեց, լարային քառյակների սրեղծագործությունների մեջ կան նաև երկու անավարտ գրառումներ, որոնք գրվելու են Կոմիտասի ֆոնդի 1530 և 535 համարների փակ: Երկուսն էլ անվերնագիր են: Համար 1530 գրառման սկզբում նշված է ընթացքը «Andante»: Արձանագրության մի շարք առանձնահատկություններից դարելով, հարակորեն կարելի է ասել, որ 1530 համարն ունի սկիզբ, բայց չունի վերջնամաս, նույնքան հարակարող ենք նաև ճշտել, որ N 535 գրառումը հակառակ առաջինի, սկիզբ չունի, բայց ունի վերջավորություն: Երկու գրառումներն էլ ունեն 6/8 կշռոյթ և երկուսն էլ գրված են «Ռե մեծալար» (Re Major, Re M) չայնակայքի (tonality) մեջ: Առաջինը ունի 16 հարած, իսկ վերջինս 25: Դարելով այս և նման փոխանակներից, հանգեցինք այն եզրակացության, թե այս երկու գրառումները պարկանում են միևնույն սրեղծագործությանը, ընդ որում, N 535 գրառումը պարկ N 1530-ի շարունակությունը լինի, չի բացառվում նաև, որ մի ուրիշ միջանկյալ մաս ևս գոյություն է ունեցել, որը մեզ չի հասել, բայց դա ամենևին էլ պարտադիր չէ` 535-ը կարող է նաև 1530-ի ուղղակի շարունակությունը լինել:

Այսպիսով, հասնում ենք Կոմիտասի գերմաներեն սրեղծագործությունների 38-րդին և վերջինին: Սա սիմֆոնիկ նվագախմբի համար գրված մի փոքր սրեղծագործություն է, որը գրվել է Կոմիտասի ֆոնդի 551 համարի տակ: Այս կտորը Կոմիտասը վերնագրել է «Waldnacht» («Անտառային գիշեր», ԳԱԹ: Կ.Ֆ. նո.551): Կա նաև Կոմիտասի գրառած հայերեն անվանումը, որը սակայն կոչվում է «Լեռնային գիշեր»: Թե ինչ պատճառով է առաջացել այդ տարբերությունը, ոչ մի տվյալ չունենք մեկնաբանելու համար, իսկ անհիմն ենթադրություններով զբաղվել չենք ցանկանում, ուստի այն մնում է որպես առեղծված, ամեն դեպքում չենք կարծում, որ այդ տարբերությունը առաջացած լինի գերմաներենի վատ իմացության պատճառով, կարող է նաև մի շարք հասարակ շփոթումների արդյունք լինել: Իսկ եթե դա թարգմանության շփոթ չէ, կարող է նաև կապված լինել սրեղծագործական որևէ մի խնդրի հետ, որը մեզ այժմ զուրկություն է: Վերնագրից անմիջապես ներքևում գրված է «նվագարանների համար», իսկ ընթացքը «Largo»: Ամսուսկը 4/4 է, որը հետագայում փոխվում է 6/8-ի, հետո դարձյալ 4/4-ի վերադառնում և այդպես էլ ավարտվում: Գրված է 77 հարածում:

Այսպիսով, կարելի էր ավարտել Կոմիտասի «գերմաներեն սրեղծագործություններ»ը: Սակայն այնուամենայնիվ չենք կարող զանց առնել մի ուրիշ աշխատանք, որը թեև չի մտնում «գերմաներեն սրեղծագործություն» հասկացողության մեջ, բայց մեր կարծիքով չի կարելի նաև ամբողջովին փարսեցարել դրանից: Կոմիտասի ֆոնդի համար 1648-ի տակ արձանագրված են տասնմեկ հայկական հոգևոր երգեր, բազմաշայնած և գերմաներենի թարգմանված: Վերնագրված է «Armenische Kirchengesänge von Archimandrit Komitas Keworikian Berlin 15/9» (Հայկական եկեղեցական երգեր Կոմիտաս Վարդապետ Գևորգյանից, Բեռլին 15/9)*: Դժբախտաբար այս տվյալներից չի երևում գրառման տարեթիվը, բայց ըստ երևույթին դժվար չէ մտաւոր տարեթիվը պարզել, քանի որ մի գորավոր փաստ ունենք այս դեպքում: Կարապետ Կոստանյանի դիվանի 1093 ֆոնդային համարի տակ կա Կոմիտասի մի նամակը, հասցեագրված Գևորգյան ձեռնարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին: Նամակը թվագրված է «26/14 մայիս 1897»: Մեջբերում ենք այս նամակում տեղ գրած այն խոսքերը, որոնք այս դեպքում վավերագրական արժեք ունեն մեզ համար: «Մեր հոգևոր երգերից մի քանի կտոր պատրաստել ենք քառաշայն, վեցշայն և ութն շայն. ուսուցչապետ առաջարկեց երգել տալ. պատրաստում ենք մի քանիսն էլ, ապա երգել պետք է տայ ինքը ուսուցչապետ մի որևէ եկեղեցում կամ Singakademie-ում (Երաժշտական սկադեմիա), իբրև հոգևոր համերգ: Մանրամասնությունն ապա կգրենք, երբ յաջողութեամբ գործի անցնենք»: Մեր խորին համոզմամբ խոսքը վերաբերում է վերոհիշյալ



Բեռլին, 1896թ.
Берлин, 1896.
Berlin, 1896.



Երևան, 1901թ.
Ереван, 1901.
Yerevan 1901.

հոգևոր երգերին**, մանավանդ որ նրանք են «մեր հոգևոր երգեր»ը և քանի որ այս նամակը գրված է 1897-ի մայիսին, իսկ 1648 ֆոնդային համարով գրառման մեջ նշված է սեպտեմբեր ամիսը, ինքնուրույն հասկանալի է, որ «15/9» թվականը վերաբերում է կամ 1896-ին կամ էլ 1897-ին: Վերը նշվածից երևում է, որ Կոմիտասը 1897-ի մայիսին դեռ «մի քանի կտոր» էր գրել ու պատրաստում էր «մի քանիսն էլ»: 1648 ֆոնդային համարով նյութը գրված է քանաքով, շար մաքուր, իհարկե կան հատուկ նշաններ, բայց դա ըստ Կոմիտասի աշխատանքի չափանիշներով, ոչինչ են, այլ կերպ ասած, այս նյութը մաքրագրված մի տարբերակ է: Հարցը այս տեսանկյունից դիտելով, պատճառ ունենք որոնելու այս երգերի սևագիրը, որոնց սակայն չենք հանդիպել Կոմիտասի արխիվում գրված նյութերի մեջ: Անպատասխան է մնում այն հարցը, թե ո՞ր սեպտեմբեր ամիս մասին է խոսքը: Մեջբերենք ևս մի նամակ Կոմիտասից, ուղղված Կարապետ Կոստանյանին, որը մեր կարծիքով, դարձյալ այս հար-

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(36)2009

* Այս նյութի մասին առաջին անգամ անդրադարձել է երաժշտագետ Ն. Թահմիզյանը (5.):
** Նույն միտքն է արտահայտում նաև Ն. Թահմիզյանը իր վերոհիշյալ հոդվածում (5.):

ցի հետք է առնչվում: Չարենցի անվան ԳԱԹ-ում գրելով Կարապետ Կոստանյանի նյութերի 1090 ֆոնդային համարի փակ կա մի նամակ, որը քվարկված է «22/4 – ժա/ժբ - 1896», Կոմիտասը նամակի մեջ կիսվում է «...իմ գրած երաժշտական բեկորները ուսուցչապետս յանձնարու եղաւ րպէլ րալու իւր ծախքով, ...»: Թեև երաժշտագետ Ռ. Աթայանը արանից հանգում է այն հետևություն, որ սույն «երաժշտական բեկորներ»ի փակ պիտի րեսենել «Առ գետրս քարելացվոց» սաղմոսը, այդ միտքը մեզ այնքան էլ համոզիչ չի թվում, քանի որ այդ սրբազան գործությունը համապատասխանում է ոչ թե 1896-ի ուսման շեմին գրելով Կոմիտասին, այլ 1899-ի երաժշտական գիտելիքների և մակարդակի հասածին: Բայց ահավասիկ այս երգերը, որտեղ Կոմիտասի առաջ դրված էր միայն բազմաշայնության խնդիր (քանի որ մայր եղանակը գոյություն ուներ), ամենայն հավանականությամբ կարող են լինել նշված այդ «երաժշտական բեկորներ»ը: Գրառման մեջ նշված սեպտեմբեր ամիսն էլ կարող է և գրառման սկիզբը համարվել (1896) և մշակման վերջը (1897): Բայց քանի որ ակնհայտ է այդ նյութի վերջնական փարբերակ լինելը, խոսքը այստեղ կարող է միայն 1897-ի մասին լինել:

Այս նյութում րեղ են գրել րասնմեկ հարաված Պարարագից*, ա) Ehre dir - «Փառք քեզ Տեր» (Հավարամքին նախորդող փառաբանություն);

բ) Heilig, heilig - «Սուրբ, սուրբ, սուրբ, րէր զօրութեանց» (հարված պարարագից); գ) Amen - «Ամէն»; դ) Im Welten all - «Յամենայնի» (հարված պարարագից); ե) O, entzuckender - «Ով րանչեղի և րեսիլ սհավոր» (Տեր յերկնից Մեծի Ուրբաթի); զ) Jerusalem - «Գովեա Երուսաղեմ» (Ճաշու շարական Յարութեան և Յիևանց); է) Hallelujah - «Ծափս հարեք ամենայն Հեթանոսք» (Ալեղուք Յարութեան Քրիստոսի); յ) Heut erstand - «Այսօր յարեաւ ի մեռելոց» (շարական Թափօրի Յարութեան); թ) Heiligkeit - «Սրբություն Սրբոց» (սրբասացութիւն Մարտիրոսաց); ժ) O, prachtvolles - «Ով զարմանալի» (րաղ Ջրօրհնեսց); ժա) Vater unser - «Հայր մեր» (Տէրուևական աղոթք): Այս հարվածներից ուրք գրված է երկսեռ երգչախմբի, իսկ երկու երգ երկսեռ երգչախմբի և մեներգիչների քառյակի համար: Միայն «Heiligkeit» սրբասացութիւն «Սրբություն Սրբոց»ը այս րեսակետից բավական րարբերվում է քոլորից, այս երգը գրված է ընդհանուր 16 շայնի համար, ներառյալ րեկոր և սուրանո մեներգիչները:

Սույն հոդվածով փորձեցինք երաժշտական աշխարհին հակիրճ րեղեկացնել Կոմիտասի գերմանական ոճով գրված երգերի մասին կարարված մեր աշխարանքների արդյունքները, որի հետևանքով ավելի քան կրկնապարկվում է մինչ օրս հայրնի եղած քանակը: Այսպիսով, Կոմիտասագիրության մեջ փասարացի է դառնում, որ Կոմիտասի գերմաներեն սրբազան գործությունները կազմված են ոչ թե 18, այլ ընդհանուր թվով 38 գործից, ներառյալ քերարարները: Վերոհիշյալ քանակի մեջ չեն մրկում նրա բազմաշայնած ու գերմաներենի քարգմանած հայկական հոգևոր երգերը: Խոնարիվելով մինչ այժմ կոմիտասագիրության մեջ հսկայական աշխարանք կարարած մեր անվանի երաժշտագետների վասարակի առաջ, հույս ունենք, որ առաջիկայում կհայրնվեն նոր նյութեր ու ձեռագրեր, որի շնորհիվ կը հարարանա այս ցանկը և մենք շարավելի լիարժեք րեղեկություններ կունենանք Կոմիտասի գործունէության և սրբազան րեսակի ուղու մասին:

Ծ Ա Ն Ո Ւ Ք Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Աթայան Ռ.Ա., Կոմիտասի ուսումնարությունը Բեռլինում, //Պատմա-քանասիրական հանդես, 1988, N 2, էջ 48-59:
2. Աթայան Ռ.Ա., Komitas, An den Wessern zu Babel, //Սովետական արվեստ, 1966, N 12, էջ 35-39:
3. Թահմիզյան Ն., Կոմիտասի «Պեղինեան» անտիպ պատարագի և հոգևոր այլ երգերի ներդաշնակեալ տաս կտորներով, //Հանդես ամսօրեա, 1997, էջ 89-98:
4. Լօքմագոյան Տ., Կոմիտասի երաժշտական ժառանգությունից, //«Էջմիածին», 2002, Գ, Ե., էջ 63-71; Լօքմագոյան Տ., Կոմիտաս Վարդապետի թուրքերեն ստեղծագործությունները, //«Էջմիածին», 2004, Գ, էջ 68-76:



Տիրան Լօքմագոյան, երգիչ, լրագրող, 1991թ.
Tiran Loqmazyozyan, singer, editor, 1991.

լուսանկ. Վ.Թովմասյանի
photo by V.Tovmasyan

երաժշտական շԱԳՍԱՏԱՆ 4(35)2009

* Ն. Թահմիզյանը իր վերոհիշյալ հոդվածում խոսում է տասը երգի մասին և «Amen»-ը թողնում է այդ հաշվից դուրս, չնայած որ նա իրավացի է այդ մտաեցմամբ, քանի որ դա «հոգևոր երգ» չէ, բայց այնուամենայնիվ մի ինքնուրույն «կտոր» է, որը այդ երգերից ոչ մեկի մասը չի կազմում, այդ պատճառով էլ մենք մտքել ենք հաշվի մեջ:

**ЦОВИНАР ЭДУАРДОВНА
СИМОНЯН-ЛОКМАГОЗЯН**

Певица, журналист

//Голос Армении, 4 декабря 2008

Тиран Локмагезян родился в Стамбуле. Начальное музыкальное образование получил у скрипача и композитора армянского происхождения Людвиг Базиля в Мюнхене, где его семья прожила 10 лет. В 1989г. он окончил государственную консерваторию в Стамбуле и в 1990г. приехал в Ереван на стажировку в консерваторию, где был зачислен в класс Гоар Гаспарян. Комитас интересовал Тирана прежде всего, как автор Литургии, но неожиданно для себя он обнаружил его берлинское наследие и нота за



Тиран Локмагезян,
Эчмиадзин, 1991.
Tiran Lokmagozyan,
Echmiadzin, 1991.

Проснись, уставшее, обиженное сердце

нотой расшифровал уникальные рукописи. Lied'ы (как будто специально для него) были написаны для баритона, владеющего немецким.

18 мая 1991 года Тиран Локмагезян исполнил 10 немецких песен Комитаса в духовной семинарии Геворгян, в том самом круглом зале, который служил когда-то для Комитаса рабочим местом. Песни впервые исполнялись в XX веке. В концерте также приняли участие концертмейстер Левон Арутюнян и автор этих строк, исполнившая армянские песни Комитаса, чтобы неизвестный доселе Комитас прозвучал вкупе с известным. Зрители этого необычного концерта также были необычными. Это были первые паломники из Стамбула, делегацию которых возглавлял епископ Месроп Мутафян, ставший впоследствии Патриархом Константинопольским.

Концерт мы повторили в Стамбуле 31 мая 1994 года. Комитас обычно устраивал концерты-лекции, и мы на этот раз сопроводили песни текстом, рассказывающем о Комитасе, а потом уже этот концерт повторили в Музее литературы и искусства в Ереване 15 ноября 1996г.

В 2005г. эти песни вновь прозвучали в Камерном зале, на этот раз они были дополнены 4 хорошими произведениями в исполнении хора Гейдельбергского университета под руководством профессора Вассермана, которому Тиран заранее отослал ноты.

– И столько лет эти прекрасные песни дремали? – спросил Вассерман.

– Не они спали, а мы, – ответил ему Тиран.

Немецкому профессору песни Комитаса напомнили произведения Вагнера позднего периода, где музыка, развиваясь и достигая своего апогея, разрешалась болью.

С 15 по 23 ноября в Ереване состоялись Дни немецкой культуры, организованные Посольством Германии. В рамках этих Дней мы вновь повторили концерт, включающий немецкие и армянские песни Комитаса. Лучшего выражения связи немецкой и армянской культур трудно было себе вообразить.

Мы назвали концерт “Проснись, уставшее, обиженное сердце”, видоизменив строки из одного Lied'a на слова Юлиуса Штурма:

Усни, уставшее, обиженное сердце,

Сон есть бальзам для твоей боли.

Концерт состоялся 20 ноября в Доме-музее А.Хачатуряна. На этот раз песни также сопровождалось словом, где представлен был Комитас и его берлинский период, а также дана оценка его деятельности со стороны иностранных музыковедов.

Вот несколько отзывов немецких слушателей о концерте:

“Чудесный, трогательный концерт, полный грусти и поэзии, который приблизил нас к великому музыканту Комитасу...” (Андреа Викторин, посол Германии в Армении);

“Этот чудесный концерт рассказал нам о душе Армении” (Нагель, заместитель президента Университета Гумбольдта в Берлине);

“И не предполагала, что немецкая и армянская музыка настолько гармонируют друг с другом. И так совершенно было представлено...” (Лидия Вестрих, член парламента ФРГ);

“Чудесный праздник таланта армянской музыки и гения Комитаса. Это удовольствие я увезу в своем сердце в Берлин” (Ш.Проспер).

Остается добавить, что немецкие Lied'ы Комитаса свидетельствуют еще и о том, что армянское песенное искусство поставить на классическую основу в состоянии был лишь музыкант, способный создавать песни в духе Шуберта и Шумана,

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՍԱՏՈՒՐԻ
ԴԱՐԲԻՆՅԱՆ**

*Խմբավար, քառահար,
Կոմիտասի անվ. ԵՊԿ պրոֆեսոր*

Մի նկարի պատմություն

Կոմիտասի հանրահայտ «Կալի երգ» խմբերգի հետ կապված հիշում են հերոսը՝ 1968թ-ին, երբ որպես երգիչ արտիստ էի Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբում, մարտի 7-ին մեզ այցելեց Երևանում հյուրընկալվող արգենտինացի փառանդավոր կոմպոզիտոր և դիրիժոր Ռոդրիգես Ֆորեն: Հանդիպման ընթացքում նա խնդրեց հայկական ժողովրդական մի երգ կատարել: Երգչախմբի գեղարվեստական ղեկավար Թաթուլ Ալթունյանի առաջարկությամբ, խմբավար Գրիգոր Սանդալյանը ղեկավարեց Կոմիտասի «Կալի երգ»ը, մեներգե՝ Հակոբ Ավետիսյանը:

Կատարման ավարտին Ռ.Ֆորեն, հուրնկալու, երգչախմբի առջև խորը խոնարհվեց և ասաց. «Ես այսպիսի երաժշտություն երբեք չեմ լսել»: Սա Կոմիտասի երաժշտության գնահատանքն էր արգենտինացի անվանի կոմպոզիտորի կողմից: Այդ հանդիպումից մնացել է մի խմբական լուսանկար, որ սիրով պրամադրում են ընթերցողին:



Հայաստանի Երգչախմբային ընկերության երգչախումբ, գեղարվեստական ղեկավար ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր Թաթուլ Ալթունյան, Երկրորդ շարքում ձախից յոթերորդը՝ Ռոդրիգես Ֆորեն, Գրիգոր Սանդալյան, վերջինը՝ Հովհաննես Դարբինյան, 1-ին շարքում աջից չորրորդը՝ Հակոբ Ավետիսյան

ԼԵՒՈՆ ՊԱՐՈՒՅՐԻ ՄՈՍՏԵԱՆ

**Բժիշկ,
Փարիզ**

Անրարակոյս, փարիզահայութիւնը վայելեց երաժշտական հարուստ շաքառ մը, շնորհիւ Հայաստանի հոյլ մը փառանդատոր երաժիշտներուն ու անոնց հետ Հայաստանի պետական կամերային երգչախումբին, ղեկավարութեամբ Ռուպերտ Մլքէեանի, որ առանցքը կազմեց այս միջոցառումներուն:

Երեքշաբթի, հոկտեմբերի 13, 2009թ-ի երեկոյեան սկսաւ կոմիտասեան երաժշտութեան մասնագիտական բնոյթ ունեցող առաջին երեկոն: Այս շեռ-

* * *

Մեծ հաճոյքով ներկայ եղած եմ Ռուպերտ Մլքէեանի երգչախումբի երեսնեան փորձերուն «Կոմիտաս կամերային փառ» սրահին մէջ: Հաճոյքով կը դիտեմ այս իմբավարը որ չնայած իր յաղթանակաւ արտաքին տեսքին, իր դէմքին նուրբ արտայայտութիւնները կը դառնան մանկական աղաչական բարի խնդրանքներ: Հիացումով կը դիտեմ իր կոմիտասերի շեռքերը, որոնք կը բուին ինծի երաժշտական քաշային հարուածներ: Ան համեստ, ազնիւ ու բարի անձնատրութիւն մըն է: Կը սիրէ երգչախումբին բոլոր անդամները եւ այդ սերը փոխադարձ է:

«Կոմիտաս, մաքուր պէպք է երգել... իր բոլոր աշխարհիկ սրեղծագործական ժառանգութիւնը արդէն կարարել ենք թիով 170, հոգեւոր ամբողջ ընկրանին երգել ենք», հրճուանքով կ'ըսեր ան ինծի:

Լուսաւոր էր Հայաստանի պետական կամերա-

ԳՅՈՒՄԱՆԱՄԱՆՔ ԳՍՐԻՔՈՒՄ

Մտորումներ Կոմիտաս Վարդապետի ծննդեան 140-րդ փարեդարձին նուիրուած Փարիզի մէջ տեղի ունեցած համերգներուն մասին

նարկին իր մասնակցութիւնը բերաւ անուանի երաժշտագէտ Մեք Նավոյեան, րնօրեն՝ Հայ հոգեւոր երաժշտական կեդրոնին, որ մասնակցած է միջազգային բազմաթիւ դասախօսութիւններու ու գիրաժողովներու: Կոմիտաս Վարդապետի աշխարհիկ երաժշտութեան մասին անոր գրախօսականը շար շահեկան եւ հետաքրքրական ըլլալով հանդերձ, ֆրանսերէնի թարգմանութեան պատճառով, դժուարամատոյց դարձաւ մաս մը ունկնդիրներու: Ապա, յաջորդաբար եւ մէջընդմէջ, ելոյթ ունեցան Հայաստանի Սենեկային արական կազմի երգչախումբը եւ սփրանսօ Յասմիկ Թորոսեանը: Երգչախումբը միաձայն երգեց կոմիտասեան «պարառիկներ»՝ հիասքանչ միասնականութեամբ, զուլալ անքիծ ու սահուն, փոխի ի փոխ Յասմիկ Թորոսեանի կարարմամբ, սաղմոսներ, մեղեդիներ, փաղեր, շարականներ: Ռ.Մլքէեանի աննկուն պրպրումներու, մեծ ջանքերու շնորհիւ ժողոված կոմիտասեան այդ փարբերակները, իմ առաջին ունկնդրութիւններն էին: Արժանաշիշարակ էր յարկապէս երգչախումբի արական կազմի «Ահեղ չայնը» փաղը, խորութեամբ եւ վերապահ իր կարարմամբ: Նոյնպէս եւ Յ.Թորոսեանի «Տիրամայր» փաղը, որ ներկայացուց հանգիստ ելեւէջներով՝ իշխելով իսպորտուն վրայ, երգը դարձնելով թեթեալաշարժ ու մաքուր: Այս միջոցառումը վերջացաւ երկսեռ երգչախումբի մեծ վարպետութեամբ մեկնաբանուած երգաշարքով մը՝ կոմիտասեան «գործերով», բարձր փրամադրութիւն սրեղծելով ունկնդիրներուն մօտ:

յին երգչախումբին սրբազան եւ աշխարհիկ երգերու համերգը, հիւզաբքի 15 հոկտեմբերի Փարիզի ոսկեգօծ «Saint Louia des Invalides» փառարին մէջ (յեփազային կ'անդրադառնամ այդ մասին):

* * *

Կիրակի հոկտեմբերի 18-ի երկոյեան, Փարիզի շքեղ «Sall Gaveau» համերգասրահին մէջ շարունակուեցաւ կոմիտասեան փառապօնը:

Յուզիչ էր տեսնել բեմի վրայ Հայաստանի անուանի Սենեկային երգչախումբը, հոգեպէս միախառնուած Փարիզի առասպելական Միսիս-Կոմիտաս երգչախումբին հետ, Կարպիս Արիկեանի վեհ ղեկավարութեամբ: Ան հայ երաժշտութեան փառաւոր կաղնիէն հասար ճիւղ մըն է եւ իրեն է, որ շնորհուեցաւ պարիւր բանալու համերգը Կոմիտասի «Հայրապետական մաղթանքով»:

Միջազգային փարողութեամբ դաշնակահարուհի Սվեթլանա Նաւասարդեան Կոմիտասի «Պարեր դաշնակի համար» կրորին մէջ ցոյց տուաւ իր փաղանդին զանազան երեսակները: Բոլորովին ուրիշ երանգներով կարարուած անոր մեկնաբանութիւնը փարողութիւն ձգեց ունկնդիրներուն վրայ:

Մեջօ սփրանսօ Ճիլեթթա Գալոյեան հանելի ճկուն չայնով աւելի յաջող էր «Carmen» օփերայի Habanera երգին մէջ:

Գնահատականներու արժանացած, միջազգային հանրածանոթ բեմերու, երաժշտական աշխարհի համակրանքը եւ արդարօրեն անոնց հիացումը վայելող պաւ-պարիթօն Բարսեղ Թումանեան սքանչելի «Մեծ չայներ»էն է: Այսուհանդերձ անյա-

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(36)2009

ջող էր կոմիդիաների երգերու կատարումը, մասնա-
անդ իր ընկերած երգերով: Ան բոլորովին այլափո-
խեց «Անտոնին», «Ծիրանի ծառը» եւ իր չայնիկ
անյարմար «պանդուխտի» ցատու երգերը: Այնու-
մենայնիվ «Հայաստան» եւ Շառլ Կոնոյի “Sérénade
de Méphistophélès” քառյակներու մեկնաբանութե-
անք ան ցոյց տուաւ իր երաժշտական երգեցողութե-
ան բարձր մակարդակը:

Հայկ Դաւթեանի ղեկավարած «Նաիրի» կամե-
րային անսամբլի «Մանրանվագներ» «Մենահա-
մերգներ» Կոմիտաս-Ալամազեան գործը շար յա-
ջող եւ վարպետութեամբ ղեկավարուեցաւ: Այնու-
մենայնիվ կրկանք ըսել թէ անելի Ալամազեանի
գործն էր, քան թէ Կոմիտասինը, քանի որ իր դաշ-
նատրումն ու ընթացքը - թեմբո - բոլորովին փոխու-
ած էին:

Բայց եւ այնպէս Ալամազեանի սրանչելի երկ
մըն է: Սակայն նուազավարի ղեկավարելու ոճին
վերապահ կը մնամ եւ անոր մարտական «Ժապե-
րը» անելորդ կը համարեն:

Ըստ ինձի, Կոմիտասի 140-ամյակին նուիրու-
ած համերգի մը յայտագիրը ամբողջութեամբ Վար-
դապետին գործերով պէտք էր կազմուած ըլլար: Ոչ
տարբեր մշակումներով եւ ոչ ալ նոր սրեղծագոր-
ծութիւններով:

Կոմիտաս եւ միայն Կոմիտաս:

Այս միայն իմ կարծիքը չէ. այսպէս է հասկացո-
ղութիւնը նաեւ արեւմտեան երկիրներու արուեստա-
գէտներուն, երբ կը տօնեն տարեդարձ մը:

Անկախաբար այս բոլորէն, տարիներէ ի վեր
հարցում կու տամ ինքզինքիս, թէ ինչո՞ւ հայրենի
երգչուհիները սրանչելիորէն կ'երգեն, կը մեկնաբա-
նեն օտար, դասական գործեր՝ իրենց թեքնիքայէս
բարձրորակ չայնով եւ նուազ յաջող՝ սփիւռքահայ
երգչուհիներէն, որոնք ունին հայ երգի զգայնութի-
ւնը, մօրմոքը եւ յուզականութիւնը:

Մի՞թէ լաւագոյնները կը մնան «ոչ կոչ» սոփ-
րանօ-բօլորաթուրա երգաչայները... որոնք ունին
նրբութիւն եւ բնատուր յուզականութիւն, ոլորտաւոր
դարձումներու, չայնանցումներու թեթեւաշարժ
ձկունութիւն:

Անխոնց դաշնակահարուի Շաքլ Թադէնուեանը
կըրնամ ըսել, որ համերգի սիւներէն մէկն էր ու
անոր ոգին: Ան ցոյց տուաւ իր մասնագիտական
տաղանդը Կոմիտասի դաշնակի յօրինուածքներու
մեկնաբանութեամբ եւ մենակատար երգիչներու
չայնակցութեամբ: Մեղակցութեան աստիճան ան-
կեղծ էր անոր յաղորդականութիւնը անոնց հետ:
Հաւասարապէս գեղեցիկ էր թէ՛ մեկնաբանութիւնը,
եւ թէ՛ իր ներկայութիւնը: Մէկ խօսքով, ան գերա-
զանց դաշնակահարուի մըն էր այդ երեկոյ:

Հանդիսութեան փայլը իր պայծառութեան հա-
սաւ շնորհիւ երգչախումբին ղեկավարին եւ բոլոր
անդամներուն: Անոնց մեկնաբանութիւնը «Հարսա-
նեկան երգերուն» մասին հանգամանօրէն պիտի
արտայայտուիմ առանձին գրութեամբ մը:

Միջանկեալ նշեմ, որ «Օրհնեալ բարերար Աս-
տուած» եւ «Մեր թագաւորն էր իսաչ» հարազատ
էին Կոմիտասի ոգին: Բայց նոյնը չեմ կրնար ըսել

այլ կիրորներու մասին: Օրհնակ «Ձիգ տու քաշի»,
«Էն դիզան», «Մեր թագաւորին ի՞նչ պիտի» եւ այլն:
Անշուշտ ղեկավարի մը իրաւունքին մէջ կը մտնէ
գործ մը մեկնաբանել քիչ մը անելի արագ կամ ան-
ելի դանդաղ, բայց երբ անոր ընթացքը կրկնապարհիկ
արագութեամբ մեկնաբանուի (կամ հակառակը)
գործը կ'այլափոխուի ու կը վերածուի քմայքի:

Համերգը շարունակուեցաւ այս անգամ «Գեղջ-
կական երգ ու պար» երգչախումբային շար գոհացու-
ցիչ մեկնաբանութիւններով:

Անկասկած երգիչ-երգչուհի մենակատարներու
այս յաջողութեան մէջ մեծագոյն դերը ունեցաւ ղե-
կավար Ռ.Մլքէեանը, որն իր ցուցմունքներով կարո-
ղացաւ սրանչելիորէն անոնց ներշնչել Կոմիտաս
հանձարին աստիճանները:

«Լոռու գութաներգը» Փարիզ 1930 թուականի
իր առաջին տպագրութեան մէջ՝ «Երկրագործի եր-
գը» Կոմիտասի գլուխ-գործոցներէն մին է դժուար-
ին կատարողութեամբ: Երգչախումբն այն մեկնա-
բանեց մեծ յաջողութեամբ:

Հարկ է խօսիլ թեկնոր-լիրիք Վրէժ Ղարիպեանի
մասին: Ան երգեց առանց գարդարանքի, պարզ, ինչ-
պէս պիտի երգեր գիւղացին: Իսկ երգչախումբը
գնայելիլիորէն անելի արժեւորեց իր շոյող, նրբօրէն
հեւացող հնչողութիւն ունեցող իւրայայտուկ թեկնորի
քնարերգական չայնը:

Կոմիտասեան արուեստի այս հրապառնութիւնն
ալ իր լրումին հասաւ, ունկնդիրներուն թողելով հո-
գեպարար տպաւորութիւններ: Այս համերգն ալ
եկաւ միանալու մեծանուն երգահանի յիշատակին
ոգեկոչման մշտականաց փունջին: Մաղթանք կը
մնայ տեսնելու կոմիտասեան արուեստի բիրեղա-
ցումը, անոր անելի ու անելի անթերի կատարողակա-
նութիւնը եւ հետագա համերգներու բարձր կազմա-
կերպականութիւնը:

* * *

Համերգի վերջաւորութեան, ներկայ հասարա-
կութենէն մաս մը հաւաքուեցաւ «Sall Gaveau»
ներքնամասը գլխնուղ Ռոսթրոփովիչ տրափին մէջ:
Ֆրանսայում ՀՀ արտակարգ եւ լիազոր Դեսպան
պարոն Վիգէն Չիրեմեան այդ «պիւֆերային» մթ-
նոլորտի ժողովին մէջ սփիւռքի լաւագոյն խմբավար-
երգահաններէն՝ Կարպիս Ափրիկեանին յանձնեց
«Մովսէս Խորենացի» մետալը ՀՀ Նախագահի կող-
մէ սահմանուած:

Չէ՞ք կարծեր, որ անելի պատշաճ պիտի ըլլար
մեր արժանաւոր ու համբաւաւոր արուեստագէտին
շքանշանը շնորհուէր ուղղակի «Sall Gaveau» Կալո-
նի» բեմին վրայ իր ղեկավարած «Հայրապետական
օրհներգի» աստիճան՝ որոտընդոտ ծափերու մէջ:
Ափրիկեան այնքան նոյնացած է Կոմիտասի մեկ-
նաբանութեան մէջ կէս դարէ անելի միջազգային բե-
մերու վրայ, որ երբ Ափրիկեան լսուէր անմիջական
կապ կը հաստատուէր Կոմիտաս վարդապետին
հետ, քանի որ իր երգչախումբը հանդէս եկած է յի-
սունկեց տարիէ ի վեր «Միփան-Կոմիտաս» անմա-
հացած անունով այն աստիճան, որ երաժշտական
քննադատներ կը շփոթեն Միփան-Կոմիտասը՝ Կո-

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 4(35)2009

Կոմիտաս - 140 - Ֆրանսիա

միտասի հետ:

Իր շնորհիւ է. որ փարիզեան շրջանի Ալֆրովիլ քաղաքին մէջ ներկայութեամբ երջանկահիշատակ Վազգէն վեհափառի. փողոցներէն մեկը անուանուեցաւ «Կոմիտաս»: Գրութիւնս չեմ կրնար փակել առանց հաղորդելու ամենուս ամենաջերմ գնահատանքը ու երախտագիտական զգացումները մեր բանկագին Կարպիս Ափրիկեանին. որ աստուածային բախարն ունեցաւ իր երկարատեւ դեկավարութեամբ. սրեղծագործութեամբ եւ վերամշակումներով պանծացնել ՀԱՅ Երգը մեծն Կոմիտասի բովէն անցած:

Կոմիտասի 100-ամյակին նվիրված հրատարակած լուսանկարների փոքրիկ հավաքածուն տրամադրել է «ԵՊԿ հրատարակչությանը» պրոֆեսոր Հովհաննես Դարբինյանը, որոնք լրացնելով և ճշգրտումներով հրատարակում ենք «Երաժշտական Հայաստան» ամսագրի սույն համարում, տարբերակելու այլ նկարներից նշվում է *ով:

Изданную к 100-летию Комитаса небольшую коллекцию фотографий “Издательству ЕГК” предоставил профессор О.Дарбинян. Фотографии издаются с дополнениями и отмечены звездочкой (*).

The small collections of photographs, dedicated to Komitas's 100th anniversary, are introduced by “YSC Publishing House” editor Hovhannes Darbinyan (see P. 2, 4, 5, 7, 8, 10, 14, 23, 26, 27). They are published with exact corrections in this “Musical Armenia” magazine’s publishment, marked with the distinguishing sign *.

Կոմիտասի 100-ամյակին նվիրված հրատարակած լուսանկարների փոքրիկ հավաքածուն տրամադրել է «ԵՊԿ հրատարակչությանը» պրոֆեսոր Հովհաննես Դարբինյանը, որոնք լրացնելով և ճշգրտումներով հրատարակում ենք «Երաժշտական Հայաստան» ամսագրի սույն համարում, տարբերակելու այլ նկարներից նշվում է *ով:



*



Կոմիտաս, Կ.Պոլիս, 1913-1914թթ.
Комитас, Константинополь, 1913-1914.
Komitas, Polis, 1913-1914.



Կոմիտաս, Կ.Պոլիս, 1914թ.
Комитас, Константинополь, 1914.
Komitas, Polis, 1914.

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(35)2009

ԼՈՒՍԻՆԵ ԶԱՎԵՆԻ
ՍԱՀԱԿՅԱՆ

Արվեստագիտության քեկնածու,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ

2009 թ-ի սեպտեմբերի 26-ին (հոկտեմբերի 8) լրացավ ազգային դասական երաժշտական դպրոցի հիմնադիր Կոմիտաս Վարդապետի ծննդյան 140-ամյակը: Մեծ երաժշտի ծննդյան փարեղարձի առիթով Հայաստանում և նրա սահմաններից դուրս, կազմակերպվեցին համերգներ, գիրաժողովներ, Կոմիտասին նվիրված գրքերի շնորհանդեսներ:

« Թոդ լիճի լույսը... »

Բազմաթիվ հայ երաժիշտների վերաբերյալ հնարավորություն ընձեռնվեց մեծ բեմահարթակներից հնչեցնելով Կոմիտասի երկերը ցույց տալ իրենց խոնարհումն ու երախարագիտությունը:

2009թ. հոկտեմբերի 13-ին և 15-ին, Փարիզի «Meison des cultures du monde» (Աշխարհի մշակույթների տուն) արահուս, «Des jnvalides» (Հաշմանդամների տուն) Սեն-Լուիս եկեղեցում և «Gaveau»-յի (Գավո) բեմասրահներում ելույթ ունեցան Հայաստանի կամերային երգչախումբը՝ Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ, դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը, Շաքե Մաթևոսյանը, Բարսեղ Թումանյանը, երգչուհի Համիկ Թորոսյանը: Եվրոպացի ունկնդրին ներկայացվեց հեկապրոքրական ծրագիր՝ ժանրերի հնարավոր ընդգրկումով: Կոմիտասի ժառանգությունից մինչև հոգևոր մոնոդիաներ՝ իրենց փարբերակներով, հայ գեղուն կերպի հիմքով սրեղծված մեներգեր, խմբերգեր, ինչպես նաև դաշնամուրային երկերից մի քանիսը: Փարիզի համերգներին հաջորդեցին ելույթներ Շվեյցարիայի Ժնև և Յյուրիխ քաղաքներում: Եվ Փարիզի, և Շվեյցարիայի համերգներին, նախաբան-դասախոսություններով հանդես էր գալիս երաժշտագետ Մեդ Նավոյանը: Մամուլը հիացական հոդվածներով արձագանքեց հայ երաժիշտների քարտեզ վարպետությամբ աչքի ընկնող կարարումներին: Առանձնակի հեկապրոքրություն էին ներկայացնում երաժշտագետի բովանդակալից ներածականները, որոնցում անդրադառնում էր ազգային կոմպոզիտորական դպրոցի շեղվածումն մեծ Կոմիտասի ունեցած պարունակական դերին ու նշանակությանը, հայկական

մերգային ծրագրերը, իսկ բանախոսի հակիրճ և խորհմասար նախաբանները օգնում էին օրարագգի ունկնդրին, ըստ արժանվույն գնահատել կոմիտասյան արվեստի առանձնահատկությունները: «Եղավ համերգ, որի ընթացքում հառնեց երաժշտության հանճար Կոմիտասը» - գրել է «France Arménie» ամսագիրը (1. էջ 27):

Երաժշտագետի Փարիզյան ելույթներին նախորդել էին համերգները Գերմանիայի քաղաքներում:

Կոմիտասի ծննդյան 140-ամյակի առթիվ սեպտեմբերի 5-17-ը Գերմանիայի Շտուտգարդի երաժշտական փառատունի շրջանակներում Մալբուռն, Այնհաուզեն, Լամպերթայում, Կիրխենհաուզեն, Հեթֆելդ, Լինհորսթ, Հերենսհոֆ քաղաքների մայր եկեղեցիներում ելույթ ունեցավ Ս.Գեդարդ վանքի երգչախումբը (կազմված 8 շնորհալի երգչուհիներից), որի գեղարվեստական ղեկավարն է երաժշտագետ, միջնադարագետ Մեդ Նավոյանը, խմբավարը՝ Անահիտ Պապայանը:

Գերմանիայի եկեղեցիներում երգչախումբը հնչեցնում էր 4-5-րդ դարերից սկիզբ առած հայ հոգևոր մաքրամաքուր մոնոդիան, որն իր վերախմաստարվորումն էր գրել Կոմիտասի հանճարեղ անհատականության միջոցով:

Ս.Գեդարդ վանքի երգչախումբի ելույթներին այսպես է արձագանքել Գերմանիայի մամուլը. «Բուռն ծափահարություններ 8 հզոր շայներին. Լորշի մեկասարանի գործընկեր Գեդարդի երգչախմբին, որն արդեն բազմիցս ելույթներ է ունեցել Լորշի եկեղեցում, կարելի էր լսել Այնհաուզենում: Հայաստանում»:

* Մ.Նավոյանի Փարիզում և Շվեյցարիայում կարդացած դասախոսության ձեռագրից:

րականից 8 բարեկիրք երգչուհիները մեծ համայնք ունեցող Սուրբ Միքայել եկեղեցում ունկնդիրների դարին հանձնեցին իրենց հայրենիքից բերած եկեղեցական երգը և երգեցողությունը: Հասարակությունը, րպարվորված անգուգական հնչյուններով, արվեստագետներին շնորհակալություն հայրենեց երկարարև ծափահարություններով և ունկնդրումից անմիջապես հետո, մեծ հաճույքով մի հավելում էլ լսեցին հզոր շայներով երգչուհիների հարուստ երգացանկից» (2.):

Գերմանացի հանդիսատեսի վրա հսկայական ազդեցություն էին գործում հայ հոգևոր երգը և այդ երգի կոմիտասյան բազմաշայն մշակումները. «Վաղ քրիստոնեության ժառանգությունը պահպանված է. «Արևելքի և Արևմուտքի հանդիպումն էր», - արձագանքում էր Մատուրնոն քաղաքի թերթը (3.):

Բացառիկ ջերմ ընդունելության էին արժանանում և՛ երգչուհիները և՛ իմքի ղեկավար Միքե Նավոյանն իր բովանդակալից դասախոսություններով: Երաժշտագետի խոսքը միտված էր բացահայտել դարավոր խորքերից ծնունդ առած հայ հոգևոր մոնոդիայի առանձնահատկությունները, մոնոդիաներ, որոնք գեղարվեստական նոր որակ ու արտահայտչականություն են ստացել կոմիտասյան բազմաշայնության շնորհիվ:

«Ուր երկրասարդ կին, 25 տարեկանից ոչ բարձր, երգեր են ներկայացնում դարերի խորքից: Գերմանիայում նրանց շրջագայության առիթը Սողոմոն Սողոմոնյան (1869-1935) վանականի 140-ամյակն էր, որն իր հոգևորական՝ Կոմիտաս անունով զգալի տեղ է գրադրեցնում հայկական երաժշտության պարմության մեջ: Լինելով հայկական դասական երաժշտության հիմնադիր, նա ավելի քան 3000 աշխարհիկ և հոգևոր երգ է հավաքել 3-րդ դարից սկսած և դրանց մեծ մասը վերափոխել բազմաշայն երգչախմբային երգեցողության» (4.):

Համերգների զգալի մասը կայանում էին հոտրեկայա. Հերենհոֆի “Herz Yesu” եկեղեցում ունկնդիրները ուրքի էլած, լռելյայն լսեցին Կոմիտասի հոգևոր սրեղծագործությունները. «Ավելի խորը ծանոթություն ժամերգության հետ րվեցին 3-13-րդ դարերի երգերը՝ առավելապես Կոմիտասի միաշայն բնորոհակները, նաև հարմոնիկ եռաշայն շքեղ երգերը: Երգչուհիներն իրենց մաքուր սուրբանոյով և անսովոր խորը այրով վերարտադրում էին երգերը: Մեր լսողության համար զարմանալի էին հիմք սրեղծող խորը տեմբրով շայները:

Երգչախմբի գրեթե բոլոր անդամները կարարում էին մեներգչի պարտականություններ, մասնավորապես՝ Անահիտ Պապայանը (5.):

Լամպերթայնի Սուրբ Անդրեաս եկեղեցում ունկնդիրները (իրենց վկայությամբ) պետք չունեին բարգմանության: 12-րդ դարի դասական հայերենը նրանց հոգեհարազատ էր դարձել երաժշտական հնչյունների միջոցով: Բունն ծափահարությունները վկայում էին, որ «Չգայուն հրեշտակային շայների ուղերձը տեղ էր հասել: Ս. Գեղարդի երգչախումբը երգում է Կոմիտասի երաժշտական նոր ձևավորում

ստացած երգերը: Ամբողջ ծրագրի ընթացքում երաժշտությունը և խոսքը մի անբակտելի կապի մեջ էին: Գեղեցիկ լուսավորված եկեղեցում ջերմության և հանգստի մթնոլորտ էր տիրում, ինչը ունկնդիրը ակնհայտորեն վայելում էր: Ոմանք փակել էին աչքերը, որպեսզի հնչյունները էլ ավելի խորությամբ ընկալեն» (5.):

Գերմանիայում ունեցած հաջողության բարձրակետը Շտուտգարդի Բախի անվ. Աղաղմիայի Եվրոպական երաժշտության փառատոնն էր՝ «Լույս» խոստումնալից վերնագրի ներքո: Աշխարհի րարքեր անկյուններից հրավիրված բազմաթիվ անսամբլներ և արվեստագետներ համախմբվել էին «Լույս» թեմայի շուրջ, որը կոչված էր շարունակել մի ավանդույթ՝ պահպանել և րարածել հոգևոր երաժշտությունը:

Ս. Գեղարդ վանքի երգչախումբն իր մասնագիտական ուղղվածությամբ առավելապես համապարասիան էր փառատոնի բովանդակությանը:

Մեծահամբավ փառատոնի բոլոր ծրագրերի հիմքում «Լույսի» փառաբանումն էր, «Լույսն Աստծո առկայության նախնական երևույթը»:

Փառատոնի շրջանակներում, գիրաժողովների, բազմաժանր համերգային ծրագրերի միջոցով, գերմանացիները նշում էին երեք մեծերի՝ Հենդելի, Հայդնի, Մենդելսոնի րարեդարձները:

Շտուտգարդի Բերգի եկեղեցում հայաստանցի երգչուհիները փառաբանում էին «Լույսը», մեծարելով Կոմիտասին:

Փառատոնի կազմակերպիչ Հելմութ Ռելիևգը համերգի առիթով կարճագանքի. «Ս. Գեղարդի երգչախմբի համերգը ի սկզբանե ինչ-որ հավաքույր բան է առաջարկում, մի մտերմիկ միաբանություն կարարողների և լսարանի միջև: Այս հրաշալի երաժշտությունը Շտուտգարդում, թվում է համապարասիանում է ունկնդիրների լսողությանը և մինչ այժմ ձևավորված երաժշտական ճաշակին, սակայն ահա կան բաներ, որոնք մեզ րանում են ավելի հեռուն և թողնում, որ կռահենք հազարամյակների խորքից բխող երգի և պարմության հարաբերությունը: Երաժշտությունը և խոսքը մի անկրկնելի փոխկապակցության մեջ են միմյանց հետ, ընդ որում կարելի է գուշակել եկեղեցական երգեցողության ճարտասանական ծագումը և նրա միաշայնային արմատները: Կրկին ու կրկին տոնայնության հիմքի վրա առանձնանում է մի շայն, որը զգուշորեն հեռանում է և ճախրում դեպի հանդիսավորություն»:

Ընորիվ երգչախմբի կարարողական բարձր վարպետության, օրարագգի ունկնդիրը, ըստ արժանվույն կարողացավ հասկանալ և գնահատել հայ հոգևոր երաժշտության գեղարվեստական բարձր հարկանիչները:

Միքե Նավոյանի Եվրոպայում կարողացած դասախոսությունները, Ս. Գեղարդի երգչախմբի ելույթները նվիրում էին Կոմիտասին:

Հավաքարիմ մնալով Մեծ Ուսուցչի պարգամներին, քաջատեղյակ լինելով նրա առաքելությանը, երկրասարդ երգչուհիներն իրենց բանիմաց ղեկա-

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 4(36)/2009

վարով փորձել են շարունակել նրա գործը:

Կոմիտաս Վարդապետի գիրական կենսագրության մեջ համերգային գործունեությունն ունեցել է լուսավորչական, գեղարվեստական հսկայական նշանակություն: Եվրոպական շրջագայությունների ընթացքում (Փարիզ, Բեռլին, Յյուրիխ, Ժնև), Կոմիտասը երգեցիկ խմբեր էր կազմում՝ հնչեցնելով հայ գեղջուկ երգի հիմքով բազմաձայնաժիր մշակումները:

Կոմիտաս Վարդապետի համերգները, մեծավ մասամբ, ուղեկցվում էին ելույթ-դասախոսություններով, որոնց ընթացքում քննվում և լուսաբանվում էին հայ ինքնուրույն երաժշտության գոյությունը փաստող կարևորագույն հիմնահարցեր: Իր տեսական դրույթները Կոմիտասը հիմնավորում, ապացուցում էր երաժշտական սրբեղծագործությունների ցուցադրմամբ: Մեզ են հասել Կոմիտասի ժամանակակիցների հիացական կարծիքները: Շուրջ մեկ դար է անցել Կոմիտասի համերգային գործունեությունից: Մեծ երաժշտի սկզբունքներն ու գործելակերպն այսօր ուղենշային, արդիական և

ուսանելի են: Կոմիտասի առաքելության շարունակողները այսօր էլ տարածում են մաքուր և ջիևջ «Լույսը»:

Գերմանացիները Հայդնիկ մեծարանքի խոսքեր ասելիս, մեջբերում էին նրա իսկ սրբեղծագործության վերնագիրը՝ «Թող լինի լույսը»:

Կոմիտասի անձն ու գործը բացահայտող յուրաքանչյուր երաժիշտ, ինչ-որ չափով դառնում է լուսավորության ջարագով: Շարունակվում է Կոմիտասի առաքելությունը, աշխարհում հնչում է նրա երաժշտությունը, ուրեմն. «Թող լինի լույսը»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. "France Armnic" N 347, 2009թ.:
2. Openwaldl Ried, Einhausen, 11.09.2009թ.:
3. Mühlacher und Enzkris, Maulbron, 07.09.2009, N 206:
4. Zampertheimer Zeitung, Lamperteim, 09.09.2009:
5. Morgen web, Lamperteim, 09.09.2009, հիմնադրված, N4:

Երաժշտական ՂԱՅԱՍՏԱՆ 4(35)2009



* Կոմիտաս Վարդապետ, Կահիրե, 1911թ.
 Архимандрит Комитас, Каир, 1911.
 Komitas Vardapet, Kahire, 1911



* Կոմիտասը ստեղծագործելիս Կահիրե, 1911թ.
 Архимандрит Комитас, Каир, 1911.
 Komitas Vardapet when composing, Kahire, 1911.



* Կոմիտաս Վարդապետ, Բաքու, 1908թ.
Архимандрит Комитас, Баку, 1908.
Komitas Vardapet, Baku, 1908.



* Կոմիտաս Վարդապետ, Բերա, 1913թ.
Архимандрит Комитас, Бера, 1913.
Komitas Vardapet, Bera, 1913.



* Գրիգոր Խանջյան. Կոմիտաս, Պ.Սևակի «Անրեյի զանգակատուն» ստրայերշափիկը
Г.Ханджян. Комитас (суперобложка “Неумолкаемой колокольни” П.Севака.)
Grogor Khanjyan, P.Sevak’s “Non-silent chaple”, book-cover.



* Կոմիտաս, Երևան, 1909.
Комитас, Ереван, 1909.
Komitas, Yerevan, 1909.

Դ Ի Մ Ա Ն Կ Վ Ա Ր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԵՐՍԵՍԻ ՍՈՒՐԱԳՅԱՆ

“ԵՊԿ հրապարակչության” խմբագիր

Կոմիտաս վարդապետը հայ երաժշտությունը բազմաձայնելու բանալին կարծես հայտնաբերել է մեր իսկ լեռների արծազանքների մեջ: «Սարերի վրով զնաց» խմբերգի սոպրանոն, ձայնի աղբյուրն է, որին հաջորդող ձայները նրա արծազանքն են: Ինչքան ուշանում է արծազանքը, նույնքան հեռանում, մեղմանում, նոսրանում, մարում են հնչյունները:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՐԲԻՆՅԱՆ
խմբավար,
Կոմիտասի անվ. ԵՊԿ պրոֆեսոր

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ի

գի, որը համակ եռանդ է, և որին ոչ մի ուժ չի կարող բանրել: Այդ հպարտ ժողովուրդը, իր փոքրիկ համայնքով հոգևոր բարձր արժեքներ է պարգևում երաժշտական աշխարհին»*:

Կոմիտասի երգչախմբի մեներգչուհի Արուս Ազարյանը, փարիներ անց, վերհիշելով այդ անմոռանալի օրերը, գրել է. «Կոմիտաս հայ նազելաշուք օրիորդներու հոգիին մեջ կրցավ սիրո հուրը վառել գեղջկական երգերու հանդես: Մեծ վարպետը մտովի մեզի փարավ հայրենի աշխարհի խորերը, ուր մեր երևակայության աչքով կը տեսնեիք հայ գեղջուկ կիևը, որ կերգեր, միաժամանակ պարասպետով երեկոյան կերակուրը:

Քաղհան կանեմ հո բարով,

Դոյնա կեփեմ բիբարով...:

- Ա՛յի, դուք զգացում չունի՛ք, չե՛ք կրնար երևակայել...: Քիչ մը հոգի դրեք ձեր երգին մեջ, - կրեսեր Կոմիտաս:

համերգները Եգիպտոսում

Կոմիտասը 1910թ-ի սեպտեմբերին մեկնեց Կ.Պոլիս և կարճ ժամանակ անց ծավալեց համերգային փայլուն գործունեություն, որի առաջացրած իսկապատմության ախրը փարսավեց ինչպես Թուրքիայի հայաբնակ շրջաններում, այնպես էլ՝ արվասահմանյան գաղթօջախներում: Եգիպտոսի հայ համայնքից սրացավ բազմաթիվ հրավերներ: Ընդառաջելով նրանց խնդրանքին, 1911թ-ի ապրիլին մեկնեց Ալեքսանդրիա: Մի քանի ամիս շարունակ փրոնական փրամադրության ու ցնծության մեջ պահեց քաղաքի երաժշտական հասարակությանը, որն էլ իր հերթին սիրով ու ջերմությամբ շրջապատեց մեծ արվեստագետին:

Կոմիտասն իր գործունեությունն սկսեց բովանդակալից դասասիրություններով: Առաջին իսկ խանդավառից առիթներն էր իր դյուրող ազդեցության փակ պահեց ունկնդրին:

1911թ-ի հունիսի 16-ին, Ալեքսանդրիայի «Ալ-համբրա» թատրոնի մեծ դահլիճում կայացավ Կոմիտասի 190 երգչից բաղկացած երգչախմբի առաջին համերգը: Հաջողությունն աննախադեպ էր: Հիացում՝ օտարներից և պաշտամունք՝ հայերից:

Աննկարագրելի է եղել հանդիսականների սրացած փրավորությունը: Ընդմիջմանը ֆրանսիացի և այլազգի երաժշտագետներ բեմ են բարձրացել, համբուրել Կոմիտասին, իսկ երգչախմբի անդամներին՝ վարդեր նվիրել:

Հայ և օտար մամուլում փրաված հիացական բազում հոդվածներից բերենք մի քանի հատված.

«Անցյալ երեկո, - գրել է համերգին ներկա, հայրենի գրող Ժորժ Միլասուին, - «Ալ-համբրա»-ի բեմի վրա հայ ժողովրդի հոգին էր, որ թրթռաց, հո-

Աննման վարդապետը ճշմարտապես կապերը ցավի, սիրո, ծիծաղի և մանավանդ զրկանքի կյանքը իր գերզգայուն սրբով ու վառ երևակայությամբ: Նայած երգին բովանդակության, ան կուգեր, որ մենք փոխանկրոսի ըլլալիք մերք գեղջուկ կիև, մերք երկրասարդ հարս, մերք սիրահար ու մերք ալ՝ պանդուխտ:

Քանիցս կը կրկներ.

- Եթե դուք պանդուխտ չեք եղած, ուրեմն չեք գիտեր, թե կարոտը ինչ է. զգացում դրեք ձեր շայնի մեջ:

Ու մեր երևակայությունը արևմտյան իրապատմությամբ բթացած՝ կրկնակի քաջալերության կկարոտեր հայ գեղջուկի մաքուր կյանքն ապրելու՝ երգերու կարարման ժամանակ»:

Ալեքսանդրիայի հայ լրագրողներից մեկը այդ համերգի մասին գրել է.

